



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

3864

ՔԱՅՆ ԵՒ ՀԻՆԳ ԱՄԵԱՑ

ԲԵՐԾՎԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ

Պ. Հ. ԱԴԱՄԵԱՆԻ



Գ Ր Ե Ց


Պ. ԶՈՆԱՎԵՏԵԱՆ



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԿ. ՆՀԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

—  
1888



Եղիսաբետ Օքոնդ Եղիսաբետ  
Քանչըրթի գլուխ յարզման համար  
Հ. Յովին. ԲԱՆ ԵՒ ՔԻՆԳ ԱՄԵՐԻԿԱ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ

700 ԲԵՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ

29-50 Պ. Հ. ԱԴԱՄԵԱՆԻ

792(47.925)03

4-19

2004

Գ. Բ. Յ.

Պ. ՏՈՎԱՎԵՏԱՆԻ

103  
02  
02  
101



Կ. ՊՈԼԻԱ

ՏՊՕԳՐ. ԵՀՍՈՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ  
ՊՈԽԱՎԱՅԻ ԱՎՈԼԻՉՅԱՅԻ ԲԻՈԼՈԳԻԱ  
7/11 1922  
Ա. ԱՅԱ, ԽԱՆՈՒՐԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

2011

9005

ՅԱՐԱՋՈՒՆ

Պ. Պ. Հ. ԱԴԱՄԵԱՆԻ

ՀԱՄԱՌՈՅ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԵԱՆ

ԻՒՐ ԳՍԱՆԵԽԱՀԻՆԳ ԱՄԵԱՑ ՅՈՒՆԵԱՆԻ ԱՌԹԻՒ



Հասարակ տեղիք է հոչակել այժմ  
թէ մարդկային քաղաքակրթութեան  
հնոցներէն մին է թատրը, որ, ժամա-  
նակակից բարուց գեղեցիկ եւ տգեղ ե-  
րեւոյթները պատկերելով ժողովուրդին  
առջեւ, կը խորշեցունէ՝ զայն նուաս-  
տութենէ եւ չարութենէ եւ կը վառէ  
ի սէր վսեմին եւ բարւոյն :

Այս ճշմարտութիւն վաղածանօթ է  
մեր ազգին, որ, պատմական դարուց  
մէջ իւր թատերասիրութեան փայլուն

ապացոյցները տուած լինելէ զատ , ներկայ դարուս մէջ իսկ ոչ նուազ նշանաւոր հանդիսացած է իւր թատերասիրութեամբ : Արդար նախածանօթ իրդութիւն մ'է թէ Հայք հիմնեցին Արեւելեան թատերաբեմն , ուր մեր անդրանիկ դերասաններ եւ դերասանունիներ , ինքնուս եւ գրեթէ անխրախոյս , յաջողած են փայիլ իրենց արտասովոր ընդունակութեամբ :

ՊԵՏՐՈՍ ԱԴԱՄԵԱՆ եկաւ վերջապէս , եւ իւր խաղով կերպարանափոխեց Հայ թատրը : Վերջ տուաւ այս մնամէջ դիւցազներգութեանց եւ գրեհիկ զաւեշտներուն որք սկսած էին ողողել թատերաբեմն , եւ , անոնցմէ աւելի ճշմարիտ եւ աւելի ազնիւ ճիւղ մը մշակելով , բուն թարերգութեան (տառմ) ճաշակը ներմուծեց ժողովրդին մէջ :

ՊԵՏՐՈՍ ԱԴԱՄԵԱՆ ոչ միայն յեղափոխեց Հայ արուեստն , այլ եւ կատարելագործեց զայն : Բնական եւ ստացական ամեն ծիրքերով օժտուած , մուսայից սիրեցեալ զաւակ , նկարիչ եւ քերթօղ , ինք բարձրացուց թատերա-

բեմն եւ հասցուց արուեստը մի նրբութեան որ անծանօթ էր իրեն :

ՊԵՏՐՈՍ ԱԴԱՄԵԱՆ , իրեն յատու կ ջերմութեամբ մը շեշտերով իւր ստանձնած դերերն եւ իւր հրապուրիչ անձնաւորութեան դիւթութիւնը ծաւալելով հանդիսականաց վրայ , յաջողած է իւր հեշտալուր եւ քաջոլոր առողանութեան շնորհիւ սիրելի ընծայել Հայ լեզուն եւ հետեւապէս Հայ ազգութիւնն ոչ միայն յաչս օտարախօս կամ օտարասէր համագգեաց , այլ եւ յաչս օտարաց անգամ :

ՊԵՏՐՈՍ ԱԴԱՄԵԱՆ , Հայ ժողովրդեան ամեն դասերուն հաւասարապէս համակրելի , իւր արուեստին անխտրականութեամբ յաջողած է միութեան գիծ մը հանդիսանալ համարիւն եղբարց միջեւ , 'զորս դժպիի հանգամանքներ անջատ կը պահեն իրարմէ եւ մինչեւ իսկ իրարու դէմ կը համեն մերիթ :

ՊԵՏՐՈՍ ԱԴԱՄԵԱՆ , ազգային շրջանակին մէջ այնքան դափնիներ քաղելէ յետոյ , առաջին Հայ արուեստագէտն եղաւ որ յանդգնեցաւ ոտքը դնել եւ րոպեան ազգաց թատերաբեմներուն վը-

րայ : Իւր յանդգութիւն փառօք պսակուեցաւ , եւ խանդավառ ծափահարութեանց շուինդ մ'ընկերացաւ իւր քայլերուն Վոսփորին մինչեւ հովկաս եւ կովկասէն մինչեւ Ֆինլանտիա : Հետեւեալ նկարագրութիւնը պերճախօս լեցւաւ կ'արտայայտէ այն հիացում 'զոր Հայ արուեստագէտն աղդած է իւր օտարագգի ունկնդիրներուն , պայծառապէս ապացուցանելով թէ Հայը կարող է Թատերական արուեստին մէջ ալ արժանավայել դիրք մը գիւաել Հնդիկ-եւրոպէան գերդաստանին միւս անդամներուն քով :

Կ'արժէր ուրեմն տօնել քսանեւիրնգամեայ այսքան փառաւոր գուծունէութեան մը Ցոքելեանը : Պէտք էր վերջապէս մրցանակ տալ անխոնջ աշխատաւորին . որ քառորդ դարու մը մէջ յաղթանակէ յաղթանակ խոյացած է : Պէտք է որ մեծ արուեստագէտին հայրենակիցները փայլուն ցոյցերով յայտնէին թէ որքան կը գնահատեն հանճար եւ անձնուուիրութիւն , այսու եւ յոբելեանի խրախուսիչ սովորութիւնը

Ներմուծելով Տաճկաստանի մէջ :

ՊԵՏՐՈՍ ԱԴՅԱՄԵԱՆԻ համակրող ազգայինք կարգադիր Մասնախումբ մը կազմեցին իսկոյն , հետեւեալ անձերէն բաղկացեալ :

### ՄԵԾ . ՏԵԱՐՔ ՆԵՐԱԷԱ ՆԵՐԱԷԱՆ

Ա. Ա. Ա. Ա. Ա.

Կարապիտ Սրվահեան

Գանձապէտ

Մինաս Զերազ Քարտուղար

Վահայէլ Է. Փորբուզար

Ասպիտ Ա. Զունդ

### ՄԵԾ . ՅԵԱՐՔ ՅՈՒԲԻԱՆԻԱ ԹՈՐՈԽԵԱՆ

Գևորգ Ապառալահ

Թովիաս Թէրզեան

Սրտապիտն Հեմիմեան

Պետրոս Վասիլիան

Մասնախումբը որոշեց ի պատիւ յոբելեարին Թատերական երեկոյթ մը տալ դեկտ . 50ին ի նոր-Թատրոն Բերայի (Նախկին Արեւելեան Թատրոն) :

Մասնախումբը թատերասէը հասարակութեան հրաւէը կարդաց մասնակցել հանդիսին անձամբ եւ նուէրներով , եւ այժմ , բերկրութեամբ տեսնելով թէ ժողովուրդը ջերմ համակրամսօք ընդունածէ իւր հրաւէր , պարտ անձին կը համարի իւր սրտագին շնորհակալիքը յայտնել ազնիւ Հանդիսականաց :

50 Դեկտ . 1888

Կոստանդնուպոլիս

## ԱԴԱՄԵԱՆ

ՀՅՈՒՅՑ

Ա.

Ներկայ գրքոյի մէջ յառաջ կը բերենք Պետրոս Ագամեանի , 'ի Ռուսիա ունեցած , թատերական կենաց նկարագիրը մասսամբ միայն . « մասսամբ » կը նենք որովհետեւ ամբողջին համար հատորներ իսկ հազիւ թէ՝ բաւեն : Նա իւր թատերական նախնական շրջանն անցուցած է ասու , 'ի կ . Պոլիս , մինչեւ 1879 թուականն , պարբերաբան ներկայացումներ տալով :

1873ին առիթ կունենայ գտնել պաշտպան և մեկենաս յանձին՝ արքունի ճարտարապետ Յակոբ պէյ Պալեանի , որ կը քաջալերէ ոչ միայն Ագամեանն , այլ և

բոլոր խումբի գերասաններն , զորս հաւաքած էր թատերապետ Պ. Մաղաքեան , և որ կանոնաւոր ներկայացումներ կուտար Օրթագիւղի այն թատեր մէջ , զոր կառուցած էր Յակոբ Պէյ , իւր մասնաւոր ծախիւք , և նուիրած Բարեսէր ընկերութեան :

Ադամեան այդ խումբին մէջ կը կատարէր առաջին գերերը : Եւ այն ժամանակ քաջալերեալ Յակոբ Պէյէն՝ այնքան մեծ եղաւ ժողովրդեան եռանդն , որ նոյն ապաւոյ թատերական եղանակին մէջ 1200 ոսկի հասայթ կը գոյանայ :

1879ին Ադամեան կերթայի թիֆլիս , և ներկայացումներ կուտայ անդ . ուր այլ ևս հօգեկանին առաջ կոչնչանայ նիւթականն և Ադամեան թիֆլիսի մէջ կը թեւակոփէ իւր յաղթական փառաց առաջին աստիճանը : Եւ այնուհետեւ իւր ամբողջ էութիւնը կը նուիրէ իւր արուեստի կատարելութեան : Երեք ամբողջ տարիներ թիֆլիսի հասարակութիւնը միշտ աւելի և աւելի խորին համակրութեամբ կը լցո՞ի գէպի նորա գերասանական հանձարը : Մի և նոյն ժամանակ

և անաչառ քննութեամբ վերաբերելով՝ նորա գերասանական թերութեանց նըկատմամբ :

Պ. Ադամեան մի փոքրիկ խումբի հետ թատերական ուղեւորութիւն կընէ նաեւ կաւկասիոյ զանազան քաղաքները՝ Ալեքսանդրապոլ , Գանձակ , Շուշի , Բաքու , Բաթում , Ախլաջլաք , Ախալցխա և Վլադիկաւկաս , ամեն ուրեք ջերմ և սիրալիր համակրութիւն գտնելով , մանաւանդ՝ ի Բաքու , ուր թատերապետութիւնը Թիֆլիսէն ոչ նուազ ծաղկած է , և ուր կը ներկայացնէր ոռուսաց խումբին հետ :

Ադամեան օգտուելով սոյն մշտավառ քաջալերութենէն շարունակ կը ձգտի կատարելագործութիւր արուեստին մէջ . և յառաջադիմութեան անսահման իշձով տոջորեալ , կուսումնասերէ մինչև երկու հարիւր յիսուն գերեր , որոց մեջ նշանաւոր կը հանդիսանան Անգլիական — Համլիք , Օքելլոյ , Արքայ Լիբ . Գերմանական — Ֆրանցի դերբ՝ Շիլէրի Ակազակինէր ողբերգութեան մէջ , Պրախհկէլի Նարցիս , Կուդուկովի Ուրիէլ Ա-

քսրա ևն . Գաղղիական — Տիւմա — Հօր  
Քինը , Հիւկոյի — Ո. նձելլոյ , և Ռիկոյի էրոյ ,  
Ռիւ-Պյաս . և այլք . և Ռուսական —  
դիմակահանդէս՝ ողբերգութիւն Լերմոն-  
տովի , Խելքից Պատուհաս , Ռևիզոր ,  
Զննի տեղ զնի , և Կրինջիսկի Հարսանիք :

Հայերէն ողբերգութեանց մէջ Մկըր-  
տիշ Պէշիկթաշեանի Արշակ Բ . Արա-  
պիոն Հեքիւեանի Սմբատ Յ . Հարմակ և  
Աշխան , Էմմանուէլ Խսայեանի Արշակ Բ .  
և Սունդուկեանի Խարապալա :

Ի նկատի առնելով Ադամեանի ընտ-  
րած խաղերն , այն եղրակացութեան  
կուգանք թէ՝ նա սկզբունք դրած է ի-  
րեն միացնել գերասանական գովոցի  
պահանջները թատերական գաղտփա-  
րականութեան պահանջներուն հետ ,  
և արտաքսել անհեթեթ ու ծաղրելից  
պատկերները թէ՝ կատակերգութեան և  
թէ՝ ողբերգութեան մէջէն :

Ադամեանի սոյն ուղղութիւնն և տա-  
կաւ յառաջդիմութիւնն այն աստիճան  
ահագին փայլ կը սկսի տալ նորա ան-  
ուան , որ նորա հսմբաւն Թիֆլիսէն կը  
ծաւալի ամրող Ռուսաստանի մէջ : Այդ

միջոցին Ադամեան՝ Նոր-Նախիջեւանի  
հայ թատերասիրաց ակումբի կողմէն կը  
հրաւիրուի եռամսեայ պայմանաժամով :  
Ապա , կուղեւորի Մոսկուա՝ տեղական  
հայ ուստանողաց կողմանէ կրկին հրաւէր-  
ներ ընդունելէ յետոյ :

շութեամբ կը լնու ամեն արուեստասէր :

«Օթէլլօ — հայ լեզուաւ : . . .

«Հարկաւ , տգիտարանութիւն մ'է այս ,  
ոյր իսկատիպ գաղափարն ստեղծագործ-  
ուած է թիւրիմացութեան չնորհիւ :

«Ոռւս հասարակութիւնը , սահմանա-  
փակ յարաբերութիւն ունենալով հայ  
ժողովրդեան հետ , բնաւ պատեհու-  
թիւն ունեցած չէ ծանօթանոլու նորա  
գեղցկադիտական հակմանց , այլ ծա-  
նօթացած է միայն նորա կոկորդային  
արտաբերութեան և այս պատճառաւ ,  
ակամայ , կոսկածանօք կունկդրէ հայ  
գերասանին առողջանութեանը : Սակայն  
բոլորպին անհիմն է իւր այդ կասկած :  
Նախ որովհետեւ Պ. Աղամեան կատա-  
րելագոյն գերասան մ'է , և երկրորդ՝  
այն լեզուն , որով կը խաղայ նա , թէեւ  
հայերէն է , բայց ո՛չ երբէք կոկորդային ,  
այլ քաղցրահնչակ , հեշտալուր և բաւա-  
կան այլափոխիս լեզու մ'է և կարծես  
Անգլիական ու Իտալական լեզուներու  
խառնուրդ մ'եղած լինի : Մեղ ծանօթ-  
հայերէնը՝ Աղամեանի բերնին մէջ այն  
է՝ ինչ որ է հրէական լեզուն գերմանա-

Բ.

Այս կէտէն ահա՛ կոկսի Աղամեանի  
յաղթական ընթացքը Ռուսսաստանի մէջ :  
Ռուսական մասնւլն՝ ամէն ուրեք միա-  
հաղոյն՝ համաստիճան կը դասէ զնա աշ-  
խարհահոչոչակ գերասաններու հետ . իսկ  
համելթի գերին մէջ՝ տեղ տեղ անոնցմէ  
գերազանց : Ի հաստատութիւն՝ նախ յա-  
ռաջ կը բերենք նսվորսիսկի Թէեզքրաֆ  
լրագրի 1887 նոյեմբեր 22 թուակիր մի  
յօդուածն , որ միւնոյն ժամանակ կեն-  
սագրական հետաքրքրաշարժ տեղեկու-  
թիւններ կը պարունակէ :

«Հայ լեզու և Շէքսփիր — ըկ այս  
պարագայն , տպաքէն զարմանօք և տպ-

կանին քով, իսկ առողջանութիւնն եւս  
առաւել ընտիր է : Սյնալէս որ իտալէրէ-  
նի և Հայերէնի անտեղեակ մարդու մը  
համար միւնոյնն է լսել Օքելլոն Հայե-  
րէն կամ Իտալերէն . իսկ գերադասութիւ-  
նստ ինքեան ճաշակի խնդիր է :

« Ամանք նախամեծար կը համարեն լը-  
սել Ադամեանը՝ երբ կը խաղայ Փրանսե-  
րէն, որ քիչ շատ հասկանալի լեզու մէ  
ամեն մարդու . . . :

« Անձիշդ նախապատռութիւն մէ այս  
Մեր անկեղծ խորհուրդը սա է որ Պ. Ա-  
դամեան խաղայ մի միայն Հայերէն , իւր  
մայրէնի լեզուաւ : Որովհետեւ գիտակ  
լեզուաւ խաղ տեսնելն աւելի կ'երկնցէ  
ուշադրութիւնն , քան թէ կ'ելեքտրա-  
կանացնէ զայն : Զը հասկնալով լեզուն ,  
մարդս ամբողջովին իւր ուշը կը յառէ  
դերասանի «Խաղին» վրայ և արագօրէն  
կ'ընդունարէ այն ամեն կիրքերն ու յու-  
զումները , զորս նա կը պատկերէ իւր  
գէմքի վրայ ու չարժմանց մէջ :


« Անշուշտ ամեն բանէ աւելի փափա-  
քելի էր որ Պ. Աղամեան իւր գերերը  
կատարէր սուսերէն , բայց ատոր հա-

մար բաւական շատ ժամանակի կարօտէ , թէեւ իսկապէս այս բանը Պ Աղամենունի համար չէ , եթէ ի նկատ առանունը նորա աշխատասիրութիւնն եւ լեզուագիտական ընդունակութիւնը : Նա գիտէ լազմաթիւ լեզուներ , և ուսւեցէնն ալ : Կը խօսի կանոնաւորապէս :

«Պետրոս Հերոնիմոսեան Աղամեան ,  
և ծնեալ Փեփրոնէ Վասիլեան , ծնած է  
1849ին կ . Պոլսոյ Վալաթիա քաղաքա-  
մասին մէջ , հետեւաբար նա այժմ 39  
տարեկան է , թէև ըստ երևոյթին շատ  
աւելի երիտասարդ կերպէւ .

« Նորա գերասանական ասպարէզն ,  
անաշառապէս խօսելով , կ'սկսի գպրո-  
ցական գրասեղանէն . այդ ժամանակ  
արդէն նա կը վայելէր աշխոյժ և սրամիտ  
աշտկերտի համբաւ և գերասանութեան  
ձիրք :

« Ադամեան տակաւին մանկական ծաղիկ հասակի մէջ կը զրկուի իւր մօրմէն, զոր միշտ կը յիշէ մեծ յուղմամբ : Նորա հայրը յարգելի անձնաւորութիւն մ'էր. և թէև կը պատկանէր Հայ հասարակութեան բարձր պամփն ամիացնեալ այնպէս



շատ խիստ քննադատութեամբ կը նայէր  
իւր որդւոյն սիրած գերասանական աս-  
պարէզին վրայ , և շատ անդամ յայտնա-  
պէս զայրացմա՞ր կը յայտարարէր Պետ-  
րոսին՝ հրաժարիլ իւր այդ և յիմարութե-  
նէն . » Պետրոս անկեղծաբար զլալով եր-  
դուեցաւ հրաժարիլ գերասանութենէն ,  
այլ սակայն հակառակ իւր երդման չը  
կրցաւ թօթափել իրմէ այն « յիմարու-  
թիւնը » :

« Մերունի Աղամեանը , բազմաթիւ  
փորձերէ յետոյ համոզուելով դառն ձըշ-  
մարտութեան , թէ անկարելի է գիտա-  
կան մարդ մը դարձնել իւր որդին , եւ  
միւնոյն ժամանակ չուզելով նպաստել  
նորա վնասակար բաղձանաց դէպի դե-  
րասանական արուեստն , ժամագործի  
քով կուտայ : Բայց այս փոփոխութենէն  
Մուսաները շատ բան չը կորուսին . իսկ  
ժամագործն ոչինչ շահեցաւ գրեթէ :  
Պետրոս , թէև ըստ երևոյթին կը ջա-  
նար համոյանալ իւր հօր , բայց նորա  
ձեռները կը ձգտէին աւելի դէպ ի մա-  
տիտը քան դէպի ունելիքն ու խարտո-  
ցը . իսկ միտքը առաւելապէս կեդրոնա-

ցած էր ոչ թէ առ այն թէ , ինչպէս կը  
վինեն ժամացոյցի ոլաքներ , այլ՝ թէ  
ինչպէս նոքա հանդարտօրէն կը յառա-  
ջանան դէպի որոշեալ նպատակակէտը :  
Վերջ ի վերջոյ այս վիճակը կը ձանձրա-  
ցընէ ժամագործին , և Պետրոս՝ ի մեծ  
ուրախութիւն իւր՝ կարտաքսուի ար-  
հեստանոցին :

« Հայրը չափազանց կը զայրանայ այս  
այս առթիւ , սակայն խորհելով թէ որ-  
դին ընդունակ չէ ժամագործութեան ,  
կ'որոշէ տալ այնպիսի գործի մ'որ աւելի  
համապատասխանէ նորա արհեստագի-  
տական ընդունակութեան : Առեւտրա-  
կան գրասենենկի մը մէջ պաշտօն կը գըտ-  
նէ նորա համար , բայց այս ասպարէզի  
մէջ ևս , Պետրոս չարդարացուներ իւր  
հօր յսցմերն : Խնդիրն հոն է որ հաշուա-  
կալութեան մէջ ալ կը սպրդէին չարա-  
չար սիալներ . թուանշաններու չարքին  
մէջ , անկանոն կերպիւ կը նշմարուէին  
կիսադէմքեր և ուրուագծեր , որոնք ո'  
և է առնչութիւն չունէին տօմարակա-  
լութեան հետ : Բայց , չնորհիւ ծերունի  
Աղամեանի ազդեցութեան և դիրքին ,

շատ բաներ կը ներէին Պետրոսին : Այ-  
նու ամենայնիւ ներողամառութիւնն ալ  
ունի իւր սահմանը : բաւական ժամանակ  
յետոյ կը լրանայ և այդ սահմանն , եւ  
աշխոյժ արուեստամէրը վերստին կ'ար-  
տաքսուի : Տակաւին քանի մը փարձեր  
ևս եզան պատշաճաւոր գործի մը դնե-  
լու զՊետրոս , սակայն և ոչ մին չնա-  
րաւոր եզաւ : Ի վերջոյ մնացած էր միակ  
պատուաւոր ասպարէզ բոլորովին հակա-  
մէտ երիտասարդ պատանիի խանդավառ  
երեւակայութեաե : Այդ ասպարէզն էր  
զինուորական ծառայութիւնը :

« Երկարատեւ վարանումներէ յետոյ  
հայրն կը հաստատէ որդին այս նոր ու  
փայլուն ասպարէզին մէջ : Բայց գըժ-  
բաղդաբար , այս տեղ ևս Պետրոս հոգ  
չը տանիր հաճոյ թուելու վարչութեան:  
Փոխանակ զինուորական կանոնագրու-  
թեան , կը թղթատէր վիպասանութիւն-  
ներ . փոխանակ տեղեկագրերու , կը շա-  
րագրէր հոգենուագ ոտանաւորներ և կը  
կարգար զայնս ոգեւորեալ այլյուսակո-  
րոյս : Այս շըջանի պահուն կը պատահէ-  
դէսլք մ'որ ահագին ազդեցութիւն կու-

նենայ իւր համայն կեանքի վրայ : Պա-  
տահաբար ներկայ կը գտնուի մնջկատակ  
խաղի մ'որ այդ միջոցին մեծ ընդունե-  
լութիւն գտած էր կ . Պոլսոյ մէջ : Տես-  
նելով հերոսներու փայլուն ընդունելու-  
թիւնները և մնջկատակ խաղի արդիւ-  
նաւոր կատարումը , խանդավառ պա-  
տանին տակաւ կը սկսի այն աստիճան  
յափշտակուիլ , որ միայն բեմէն զատ ու-  
րիշ ո' և է իրի վրայ ո'չ կը կարենայ մը-  
տածել և ո'չ ալ խօսիլ : Մինչեւ անգամ  
մի կողմ կը նետէ մատիտն ու գրիչն :  
Այնուհետեւ , առաւօտէն մինչեւ երե-  
կոյ կը թնդացնէր օդն հոգեշունչ մենա-  
խօսութեամբր և կը պատառէր զայն  
կարի սրածաճմիկ շարժումներով : գիշեր-  
ները կը փախչէր կ'երթար թատրոն .  
գաղտագողի կը մանար թատրոնի բե-  
մակողմն . անկիւն մը կը ծածկուէր և  
զմայլմամի կը չնչէր թատերական մըթ-  
նոլորաը :

« Զինուորական փառքն ալ , հարկաւ ,  
խոյս առւաւ և Պետրոս վերստին մնաց  
անգործ , առանց որոշեալ զրովման մը ,  
սակայն որպէս միշտ , ջերմագին հա-  
ւատք մ'ունէր ապագային վրայ :

« Հայրը միշտ նոյն համովման մէջ էր .  
և ոչ իսկ բառ մը կուզէր լսել դերասա-  
նական արուեստի վերաբերմամի : Կ.  
Պոլսոյ մէջ , թատրոնն ու նորա ներկա-  
յացուցիչներն առանձինն ազդեցու թիւն  
մը չէին վայելէր և ո՛չ իսկ քաղաքին  
պատուաւոր դասի առաջ : Այս շրջանի  
մէջ միակ բացառութիւն կը կազմէր թա-  
տերգակ բանաստեղծ Սրապիոն Հեքիմ-  
եան , ոյր առաջնորդութեամբ թատերա-  
կան ներկայացումներ կը տրուէին ի Բե-  
րա :

« Սրապիոն Հեքիմեան՝ իւր գրագի-  
տական բազմակողմանի ձրից և անձնա-  
կան բարեմտոնութեանց պատճառաւ՝ հայ  
հասարակութեան կողմէ կը վայելէր մեծ  
համբաւ և խորին յարգանք :

« Եւ երբ , ծերունի Ադամեան , իւր  
զաւակն օրինաւոր գործի մը դնելու  
ընդունայն ջանքերէն յետոյ , կը ծանօ-  
թանայ Սրապիոն Հեքիմեանին , 'ի վեր-  
ջոյ իւր հաւանութիւնը կուտայ որդւոյն  
դերասան լինելու « գլուխդ քարին , կը-  
սէ ծերունին , ես ա'յլ ևս մեղաւոր չեմ :

« Առաջին խաղն որին մասնակցեցաւ

Պետրոս Ադամեան , կը ներկայէր « Գու-  
լիելմուս աշխարհակալ » վառվռուն թա-  
տերախաղը : Ադամեան կ'անձնաւորէր  
սպայ մը և իւր ամբողջ դերը կազմուած  
էր լսկ երկու բառէ « մեռի՛ր , դաւա-  
ճան » բայց նա բարեխղճօրէն « կը պատ-  
րաստէր » իւր դերն գիշեր և ցերեկ ,  
կ'արտասաննէր զայն ամեն տեսակ յերիւ-  
րումներով և զանազան գիրքերով և այն  
աստիճան լուռ ուսումնասիրած էր զայն ,  
որ « մեռի՛ր դաւաճան » գոչած և սուրն  
նետած ժամանակ , մինչեւ անգամ իւր  
ծանօթ հանդիսականներու գութը շար-  
ժեց . սակայն բեմի վրայ առաջին ան-  
գամ գտնուելուն պատճառաւ ոտները  
կը գողացին , այնպէս որ իրեն թուէր  
թէ կը պարէ : Ամեն ոք սկսաւ գովա-  
րանել նորա անդրանիկ խաղն , և նորա  
դերասանութեան մէջ կընդնշմարէին  
տաղանդի նշաններ : Սրապիոն Հեքիմ-  
եան նմանապէս գովեց նորա խաղը :

« Յիշատակութեան արժանի է յայտ-  
նել աստ թէ Պետրոս Ադամեան չը քը-  
նացաւ ոյդ գիշեր , այլ և եօթներորդ  
երկնքի մէջ կը կարծէր ինքզինք , և տիե-

զերաց մէջ ևս առաջին դերասանը կը համարէր լինել:

« Քսանամեայ հասակի մէջ, ո՞վ չի ջանար դափնիներով իւր գլուխն պսակել:

« Իսկ Պետրոս Աղամեան այն ժամանակ դեռ հազիւ 17 տարեկան կար:

« Նոյն տարւոյ թատերական ամբողջ եղանակին, Պետրոս Աղամեան կը խաղար Սրապիոն Հեքիմեանի առաջնորդութեամբ. Հետզհեաէ շարունակ կարեւոր դերեր կասանձնէր և աստիճան առ աստիճան յինքն կը գրաւէր հասարակութեան համակրանքը:

« 1869ին (թատերաբեմի փրայ ծառայելու երկրորդ տարին) Աղամեան կը մտնէ Ֆասուլեամեանի խումբին մէջ երկրորդական դերեր կատարելով: Ռուսոյ Հայք ՚ի նոր Նախիջեւան կը հարաւիրեն վերայիշեալ խումբը: Նոր-Նախիջեւանի մէջ Պ. Աղամեան իւր հոգեշունչ խաղերով մեծ յաջողութիւն կը գտնէ, սակայն իւր ընտանիքին պատահով դըբաղդութիւնն հիմնիվեր կը տապալէ նորա ծրագիրը: Կ. Պօլսոյ ահոելի հրդեհքանդանը ու քար կընէ ծերունի Աղամեա-

նը: Հրդեհի պահուն կ'այրին և նորա մի քանի տուներն, որով կորուսանելով իւր բոլոր հարստութիւնը կատարեալ չըքաւորութեան կ'ենթարկի: Պետրոս Աղամեան կը վերադառնայ կ. Պօլիս նեցուկ լինելու իւր վշտահար հօրն, բայց նա չը դիմոնալով հարուածին՝ կը հիւանդանայ և շուտով կը մեռնի, թողլով իւր որդին առանց ո՛ւ և է նիւթական միջոցի: Թատրոննը կ. Պօլսոյ մէջ չի կընար լինվին պահովել դերասանի ապրուստն, որով հետեւ գոյութիւն ունի պարբերաբար: Իաց աստի, հօր կորուստէն և կարողութեան ոչնչացումէն յետոյ, կարծես թէ Աղամեանի տաղանդի փայլն սկսաւ նուազիլ յաչս իւր պաշտպաններու: Աղամեան կը հարկադրի ապրուստի ուրիշ միջոց գննուել: Կ'ակսի զբաղիլ միայն նկարչութեամբ, երեւմն կը խաղայ թատերաբեմի փրայ հայերէն. այս ընթացքով թէեւ հոգին բերանը կուգայ, բայց չի վշտաիր: Կ'ուսանի այլեայլ լեզուներ, շատ կը կարդայ, մի առ մի կը ծանօթանայ Եւրոպական թատերագալան գրականութեան հետ և ամրող գիշերներ ան-

քուն կ'անցունէ դերերու ուսումնասիրութեամբ : Այս եղանակու նիւթական գժուարութեանց և մոլեսքանչ ծափահարութեանց միջեւ, պատուաւոր գործ մը փնտուելու և վարդագեղ երեւակայութեան միջեւ կ'անցնի ինն տարի : Աղտմեանի տաղանդը սոյն ժամանակի ընթացքի մէջ կ'աճի և կը հասուննայ : Կ'ուսանի քանի մը Շէքսիռեան դերեր եւ ասոնց մէջ նշանաւոր յառաջադիմութիւն կընէ : Նա այլ ևս կրնայ ապրիլ իբր թատրերգակ դերասան, բայց կ. Պօլսոյ թատրերաբեմն իւր նախատիպ յարմարութեամբն և պարբերական գոյութեամբ և որ առաւելն է իւր հասարակութեամբն գոհացում չի տար պատուասէր դերասանին : Նա կը բաղձայ ոչ միայն լաւ խառալ այլ և առաւել կը բաղձայ որ զի՞նքը լաւ հասկնան : 1879ին Ագումեան կ'երթոյ թիֆլիս, ուրտեղէն յատկապէս կ'սկսի նորա յաղթական ուղեւորութիւնն ի մուսիա :

« Ի թիֆլիս Ադամեան յերեւան կուգայ Համլիքի, Օքլոյի, Լիքի և այլ ընտիր դերերու մէջ : Թիֆլիսի մամուլը

միահամուռ, խանդավառ համակրութեամբ կը վերաբերի դերադրուատ դերասանի վերաբերմամբը :

« Թիֆլիսի մէջ Պ. Ադամեան կեցաւ շուրջ երեք տարի, խաղալով անդ րուր երեւելի դերերն և նոցանէ իւրաքանչիւրի մէջ մոցնելով իւր հոգին և իւր նուրբը զգացումները :

« 1883ին, Մոսկուայի հայ ուսանողաց հրաւիրանօք կ'երթայ Մոսկուա, ուր բեմ կ'ելնէ Համլիքի դերին մէջ : Հասարակութիւնը կընդունէ զնա եռանդամց ողեւորութեամբ : Արուեստակից դերասանները բարեկամաբար կ'ողջունեն զնա թատերաբեմի վրայ :

« Մոսկուայի մամուլն (որպէս յետոյ թեգերպուրկին, և ի վերջոյ Օտեսային) զարմանալի և հաջուագէպ միաձայն հաւանութեամբ վսեմագոյն դրուատիքներով կը դրույմեն նորա դերասանական հանձարը : Կը հաւասարեն զնա արուեստի, եւրոպական քայլիքներուն հետ, և լիակատար յարգանք կ'ընծայեն նորա արտակարգ և անկախ ստեղծագործութեան : Մոսկուայի մէջ Ադամեան սա-

պարէզ կ'ելնէ իրը արտասանող և կատարիչ ռուսական դերերու, կը խաղայ Լերմոնտովի Գիմականանիլու ողբերգութեան մէջ Սրբենինի գլխաւոր դերը: Այս թատերախախղի մէջ եւս կը վայելէ յաջողութիւն, որուն, կարծեմ, և ոչ իսկ յուսաւ կը վատահէր: Մանրամասն քննադատելով նորա ներկայացումը Դիմականանիլու ի մէջ, Մոսկուայի թատերական քննադատուները կը հակահանեն զնա այդ դերի մէջ Պ. Պիսարէֆի հետ, որ ռուսական ընարելագոյն Արքենինի է: և նախապատութեան գաւաղանը կ'ընծայեն Ադամեանին թէ՛ դերի հասկացովութեան և թէ՛ կատարմասն մասին: ՊիսարէՓ, որպէս յայանի է, կը ներկայացնէ «Արթենին» իրը դեղեցիկ, երիտասարդ և մինչև իսկ՝ համակրելի մարդ, որով փոքր ինչ կը հակասէ Լերմոնդովիան Սրբենինին, որ «... ամեն ինչ տեսած էր, ամենայն ինչ կը նախազգար, ամեն ինչ կը հասկնար, ու ամեն բան գիտեր», որ ինքն իսկ կ'ըսէ.

« Հռակեաց, դաժան ու թախծալից եմ ես. . . »:

« Ադամեան կը ներկայացնէ զայն աւելի մեծ իրականին: »

« Այնուհետեւ Պ. Ադամեան Մոսկուայի մեջ կը փայլի իրը նրբամիտ և հանձնարեղ բեմասաց, որոյ համար և կը վարձատրուի համակրութեան բազմաթիւ ցոյցերով: »

« Մոսկուայէն Պետրոս Ադամեան կը ձեռնարկէ դերասանական ընդարձակ ուղեւորութիւն ընել Ռուսիոց այլ և այլ կողմերն, ամենուրեք հանդիպելով ուսուժողովրդի խնդակցութեան և շնորհակալեաց: »

« 1884 ին կ'սկսի ներկայացումներ տալ Բեդերպուրի մէջ: Թատրոնական լաւագոյն քննադատները պարագային համեմատ և համակրայից յիշատակութիւններ կ'ընեն Ադամեանի մասին: Մանաւանդ շատ ուշագրութիւն կ'ընեն «համեթ»ի վրայ զոր նա կը ներկայացնէ բուլովին ինքնագիւտ եղանակաւ: Հռչակաւոր « լինի՞լ, թէ չլինիլ » մենախօսութիւնը, կարտասանէ չէ թէ մելամաղձութեամբ, որպէս կ'ընեն շատերն, այլ կոկծեցուցիչ վշտով, ձեռին ալ ու-

նենալով դաշոյն, որ անտարակոյս աւելի կը համապատասխանէ անձնասպանութեան փափաքին, քան մելամաղձային խորհրդածութեան։ Երբ Քլոտիոս զայրացմամբ կը մեկնի, այսինքն յորժամ Համիէթ կը ճանչնայ իւր հօր սպանիչն, այդ պահուն Աղամեան չի բռնկիր բռւռն կատաղութեամբ և գոհութեամբ, որպէս կ'ընեն Սալվինի, Բառնայ, Պասարտ, ԻվանոՓ-Կողէլսկի և այլք, հապա սոսկումէն կ'արձանանայ, և ապա բռնասրոսիկ հեծեծանքներ կը թափէ Հորացիոյի կուրծքին վրայ։ «Ասլա մօր հետ լինելուն տեսարանին մէջ, Հորացիոյի հետ գտնուելուն մահամերձ տեսարանին մէջ և առհասարակ և միւս տեսարաններու մէջ Աղամեան ցոյց կուտայ մոռքի կորովի թափանցկութիւն, և խանդաղատանք։ «Պետրոս Աղամեան, Խուսիոյ բոլոր նշանաւոր քաղաքները հրաւիրուելով չը ադապայելէ, և ամենուրեք ընտիր յիշատակ մը թողելէ յետոյ, այժմ առաջին անգամն լինելով կ'այցելէ Օտեսա և ներկայացումներ կուտայ «նոր թատրոն»ի մէջ։

«Ասոս թող ներուի մեզ յայտնել նըկատողութիւն մ'որ, թէ և չի վերաբերիր դերասանի տաղանդի գնահատման, բայց բաւական օրինակելի է որոշելու համար արուեստի մասին եղողայն շահսիրական հայետցներն, որ մուտ գտած են աստ արեւմուտքէն։ Մեր խօսքը գովասնական յօդուածներու վրայ է։ Եւրոպական տեսակէտով, բնաւ եպերելի չի համարուիր եթէ նշանաւոր և, ըստ երեւոյթին, պատուածանաչ դերասան մը զանազան հրաշագործ դեղահատեր և էքսիրներ հնարազի նման, ամեն տեսակ անհեթեթ գովարանութիւններ ընել կուտայ իւր մասին։ Նորեկ դերասան մը ամեն բանէ առաջ պարտի շահիլ տեղական մամուլի համակրանքն, խմբագիրներն և աղղեցիկ աշխատակիցները, կաշառելով իւր այցելութեամբք։ Կ'երեւի թէ այսպէս հարկ է վարուիլ ըստ Եւրոպականին, եթէ ո՛չ մամուլը կարող է վշտանալ նորա «անակնածութեան» համար, սակայն ուռւսական տեսակէտով, ճշմարիտ դերասաննը պէտք չէ որ փողեր հնչեցնել տայ, որովհետեւ նորա տա-

Ղանդն, առանց այդ սրաբսաւելի ընթացքին, արդէն անթիւ յարգողներ կրնայ գրաւել: Ճշմարիտ գերասանը չի կրնար ընել այնպիսի բաներ, որոնք յատուկ են շաղակրատներու և գերեզակներու միայն: Գէթ այսպէս կը խորհին առւս ուսումնականաց մեծամասնութիւնն:

«Եւ աւասիկ Պետրոս Աղամեանի պուսական այս հայեացքն, դերասանի արժանաւորութեան վերաբերմամբ, գոհունակութեամբ կը յիշատակենք մամուլի մէջ:

«Աղամեան Յանաւ եկաւ առանց ո՛ւ Եւ է հեռագրի և առանց երկայնաձիգ ազգարարութեանց: Իւր խումբը կը կազմէ մի քանի միջակ դերասաններէ, և, համեստաբար, առանց ո և է մեծաշուք պատրաստութեան, կակսի ներկայացումներ տալ փոքրիկ, սակաւայցելու թատրոնի մը մէջ: Եւ երբ կը հրաւիրեն զնա իրեն արժանաւոր վայրն, նա պայման կը դնէ որպէս զի անպատճառ հրաւիրուին և իւր պատահական դերասան ընկերակիցները, որոնք, Աղամեանի աեղափոխմամբ, գէպ ուրիշ թատերաբեմ,

պիտի մնային առանց հացի :

«Օտեսայի մէջ ներկայացնելով եօթն թատերախաղեր (Համբէթ, Օթէլլյ, Լիր, Կուլիսնէռո, Ուրիշլ-Սքոսթա, Դատապարտեալի Ընտանիքն և Քին), Պ. Աղամեան ցոյց տուաւ թէ ինք չափազանց այլափոխի և տաղանդաւոր դերակատար մ'է: Տեղական մամուլը միահազոյն ձայնակցութեամբ համարեց զնա այն ցանկալի հիւրն, որպիսին ձեռք բերելն Օտեսայի համար, առաւել ևս դժուարին է, քան մեծամասն մտանել յարքայութիւն երկնից:

«... Աղամեան թէ և կը խաղայ մեզ բոլորովին անծանօթ հայերէն լեզուաւ, սակայն և այնպէս գեղեցկագիտական անհուն համոյք մը կ'ազդէ և խորին հետքեր կը թողու իւր խաղը տեսնողներուն յիշողութեան մէջ:

«Այն անձնաւորութիւններն, զոր կը կերպարանէ Աղամեան, ձեր մտային աշաց հանդէպ, միշտ կը պատկերանան իր իրական անձնաւորութիւններ և նոցա կիրքերն ու վիշտերը անջնջելի կը տպաւորուին մարդուս հոգւոյն խորը: Ա-

ուաջին անգամն իսկ տեսնելով Աղամեան,  
մէկէն ի մէկ կը դժուարանաք հա-  
շիւ տալու ձեզ թէ ինչպէ՞ս դիւթեց ըզ  
ձեզ : Սալվինի ամեն բանէ առաջ կը  
սքանչացնէ իւր ուժով և երեւելի ձայ-  
նովն , Պոստրտ կերպարանափոխութեամբ  
և խաղին նրբութեամբ , Պետրոս Աղամ-  
եան եթէ ունի իսկ այս ամենն , դարձ-  
եալ այն աստիճան փայլուն չէ : Սակայն  
աչքերը կան որ գլխովին յարմար են  
թատերաբեմի համար : Այսու ամե-  
նայնիւ մարդ կզգայ թէ ինչպէս մէն մի  
դերի մէջ աւելի և աւելի կը հիանայ ,  
կը դիւթուի Աղամեանի խաղովն : Կըզ-  
գաք զայն չէ թէ մոքով , չէ թէ այն  
գիտակցութեամբն թէ ընտիր դերասան  
է նա , այլ մի ուրիշ անիմանալի զգա-  
ցումով , որ կը պարտաւորէ ձեզ կուլ  
տալ արցունքն և սիրել այդ օտար դէմ-  
քը , և այդ օտար լեզուն :

« Նորա ձայնի մէջ կայ գորով , և խա-  
զի մէջ բազում պարզութիւն և վեհու-  
թիւն : Նորա շարժմունքը չափաւոր են և  
չնորհալի : Երեք քառորդովն դրական և  
միայն մէկ քառորդովն դասական լինե-

լուն համար , ոչ ուրեք կը դիմէ ծայրայե-  
զութեան և աւանդական ազգեցու-  
թեանց , այլ ականաւոր տեղերը կը պայ-  
ծառացնէ իւր բոցովն , ամենուրեք պահ-  
պանելով անհրաժեշտ օրէնք և չափա-  
ւոր զգացումն : « Դատապարտեալի ըն-  
տանիք » ին մէջ թունաւորելով ինք-  
զինք բնամորմով (ստրինկնին) , Աղամ-  
եան կընէ չէ թէ « առ հասարակ » մըկ-  
նածգական շարժումներ , այլ հապա' այն-  
պիսի շարժումներ , որ տեղի կունենան  
բնամորմի թունաւորման հետեւանօք :  
Այս տեսարանը բեմի վրայ ներկայացը-  
ցընելէ առաջ , շատ բան կարգացած  
է այս մասին և բազմաթիւ փորձեր կա-  
տարած է անասուններու վրայ : Ոմանք  
կը պարսաւեն զնա իւր այդ իրականու-  
թեան հետեւելուն համար : Մենք , ընդ-  
հակառակն , կը կարծենք անտեղի է այդ  
պարսաւ , որովհետեւ , քանի որ խաղի մը  
մէջ մահ տեղի կունենայ և դերասանը  
պարտի մեռնիլ թատերաբեմի վրայ ,  
ի՞նչ հարկ ուրեմն գեղեցկապէս պառկիլ  
յատակի վրայ և թէ չը մեռնիլ հանգու-  
նատիս իրականին . մնայ որ , Աղամեան ,

թատերական ընտրողութեան օրինօք ,  
ըներ բնամորմի թունաւորման արտա-  
քին նշաններու և ոչ խսկ կէսն , որոնք  
կը կատարուին իրականին մէջ : Զղաձը-  
գաբար կը շարժին նորա դէմքի վզի մը-  
կանունքները , մկնածգտաբար կը ծա-  
մածոին մատները , սակայն աչքերուն  
սպիտակուցն չի խաղար , խռալու հե-  
ծութիւններ յաճախակի չեն ժայթքեր  
կուրծքէն : Ամենն , ինչ որ կարելի է  
դիտել տալ այս առթիւ , է օրհասական ,  
տանջանաց երկարաձիգ տեւողութիւնն  
միայն :

« Այս տեսարան , առանց չեղելու ի-  
րականութենէն , անհամեմոտ խորին  
տպաւորութիւն պիտի թողըւը եթէ  
Ադամեան միայն մէկ-երկու մկնածգտա-  
կան շարժումներ ըներ և լինար ան-  
կենդան :

« Առ հասարակ Ադամեան բեմի վրայ  
կը մեռնի չափազանց իրականապէս և ոչ  
երբէ՛ք զայրացուցիչ եղանակաւ , և այ-  
սու է խսկապէս որ մեծ տպաւորութիւն  
կը գործէ այս վսեմ տեսարանը :

« Այս հակիրծ տեսութիւնն չէ թէ

քննադատութիւն մ'է Ադամեանի դե-  
րին վերաբերմամբ , այլաւելի նորա դե-  
րասանական անձնաւորութեան համառօտ  
յայտարար նշանակն կարելի է համա-  
րել : Այսու հանդերձ աններելի է ա-  
ռանց յիշատակելու թողուլ նորա տա-  
ղանդի ականաւոր յատկանիշերը : Խօ-  
սելով նորա ձեւերու նրբութեան մա-  
սին , ընթացքի վսեմութեան և դէմ-  
քի ազգական զօրութեան վրայ : Հօշա-  
փեցինք ուրեմն նորա արտաքին առանձ-  
նայտկութիւններն միայն , որոնք  
դիւրըմեռնելի են և դիւրահասանելի  
վարժութեան չնորհիւ : Բայց իւրա-  
քանչիւր ճշմարիտ գերասան ունի տա-  
կաւին և ներքին հրաշափառ առանձնա-  
յատկութիւն մը որ անըմբունելի է , որ  
չենթարկիր ո'չ քննութեան և ո'չ կանո-  
նադրութեան : Այդ առանձնայտկու-  
թիւն կը տրուի իրեն բնութենէն , և կը  
թագնուի հոգւոյն խորը :

Այս այն աստուածային կայծն է , որ  
իբր փայլակ կը ցայտէ Ադամեանի աշե-  
րէն , կ'այլափոլմէ դէմքը , կը ցոլանայ  
մարդկային կրից արտաքին անցքերու

մէջ և սքանչելապէս կը հաղորդուի հա-  
զարաւոր մարդոց :

« Շատերը կը կեղծեն զայն, բայց նա  
այն ժամանակ միայն զգացումն կ'ազդէ,  
երբ բնածին է : Ահա այս բնատուր աստ-  
ռածային կոյցն է, որ կը կազմէ Ադամ-  
եանական խաղի հրաշափառ առանձնա-  
յատկութիւնը : Ադամեան, թէ և ըստ  
երեւոյթին հոգ կը տանի արտաքին բո-  
լոր մանր պարագայներուն, սակայն թա-  
տերախաղի պահուն կը մոռանայ զայնա,  
գոգցես հոգւոյն համակ ոյժն ուղելով  
պահել արժանաւոր տեղերու համար : Եւ  
երբ Ադամեան, զոր օրինակ, « դատա-  
պարտեալի ընտանիք » ին մէջ կը խնդրէ  
աղջկան աղօթելու տարաբաղդ հօր հա-  
մար, և իւր բազուկները կը տարածէ  
գրկախառնելու զնա, կը ժայթքի իւր  
ամբողջ էութեամբն, անմոռնչ կը համ-  
բուրէ նորա վայրահակ ծամերը և կը թա-  
նայ զայնս խանդաղատանաց սրտաճըմ-  
լիկ արցունքներով : Այդ ժամանակ դուք  
կ'զգաք այդ աստուածային « կայծը »,  
կ'զգաք թէ ինչպէս կը թափանցէ նա ձեր  
սրտի մէջ և ուրիշ հարիւրաւոր սըրտե-

րու մէջ, և թէ՝ ինչպէս այդ իսկ վայր-  
կենին ձեզի օտար սիրտերն ալ կը բա-  
րախին մի և նոյն բարախամբ, որպէս  
ձեր սիրտը. մինչդեռ Քորրատոյ—Ադամ-  
եան այդ ներկայացման պահուն բառ  
միակ չ'արտասանէք : Եւ այս տեղ ի՞նչ  
հարկ բառերու, երբ նորա դէմքի վրայ,  
աչքերու մէջ, շարժմանց մէջ, մէն մի  
երակի մէջ, գուք կընդնշմարէք ան-  
պաշտպան, սիրատանջ և վշտակոծ, գոգ-  
ցես իրական, անձնաւորութիւն մը, որ  
առ յաւետ կը բաժնուի իւր աղջիկէն և  
չի համարձակիր հայրական գուրգուրա-  
նաց մէջ արտայայտել այն սուրբ սէրը,  
զոր չը կարողացան խորտակել, ոչ տա-  
ժանակիր տարիներն և ոչ տաժանակիր  
չղթան :

« Ադամեանի սոյն ներկայացումը հրա-  
շալի է : Մի միայն ատոր համար արժէ  
երթալ թատրոն, և որոտագոչ ձայնով  
աղաղակել « Կեցցէ՝ Ադամեան » :



ցումէն յետոյ հայ ուսանողները կ'ողջունեն իրենց երեւելի հայրենակիցն, որոց Պ. Ադամեան կը պատասխանէ պերճ բանախօսութեամբ մը:

Փետրուար 12ին, Ադամեան երկրորդ անգամ բեմ կելնէ Համբէթի դերին մէջ և կը ներկայացնէ Հայերէն: Այդ օր ՚ի մէջ այլոց, հանդիսատես էին Մոսկուայի, գրեթէ, բոլոր դերասաններն ու դերասանուհիներն: Հանդիսականք կը համակուին խանդավառ զմայլմամբ, այնպէս որ երկրորդ արարուածէն յետոյ կը մատուցանեն չքեղակերտ ոսկի ծխատուփ մը, իսկ երրորդ վարագոյրէն յետոյ՝ սեղանի թանկագին ամբողջ սպասք՝ համակարծաթեայ և ոսկեզօծ: և բաց աստի, հայ ուսանողաց կողմէ դափնեայ պսակ մը, զոր Պ. Ադամեան տուն կը տանի բոլորովին տերեւաթափ, որովհետեւ հանդիսատես ուսու դերասաննք ու դերասանուհիք՝ իւրաքանչիւրն մի մի փունջ կը խլէ պսակէն, իրը յիշատակ նշանաւոր Հայ արուեստագէտին:

Սոյն ընծայմանց ժամանակ, ամբողջ թատերասրահը, և նոյն իսկ բեմը կը

Գ.

Պ. Ադամեան ՚ի Մոսկուա առաջին անգամ բեմ կելնէ 1884 փետրուար 5ին շաբաթ օր՝ ի Պուշկինեան թատրոն: Քորրատոյի դերին մէջ: Այդ օր պատահաբար թատրոնը այն աստիճան ցուրտ էր որ առաջին արարուածէն յետոյ հանդիսականները կը հագնին իրենց կրկնակոչիկներն: իսկ երկրորդ արարուածէն յետոյ՝ իրենց մուշտակները: այսու հանդերձ թատրոնը լի էր բազմութեամբ: Ադամեան՝ այդ առաջին երեկոյին իսկ կարծանանայ այնպիսի մեծաշուք ընդունելութեան, որ յատուկ է աշխարհահըռչակ դերասաններուն միայն: Ներկայա-

թնդան որոտալից ծափահարութեամբք,  
և աղմկայոյդ կեցցէ ներով՝ բազմիցս ՚ի  
տես կը կոչուի հռչակաւոր « Հայ—Համ-  
եթուը :

Մոսկուայի թատրոններու նշանաւոր  
գերասանները կերթան բեմակողմի ետև ,  
և ցնծագին կ'ողջունեն իրենց արուես-  
տակիցը : Նոքա ամենքն ևս , առանց բա-  
ցառութեան , սքանչացումն կը յայտնեն  
Աղամենի գերասանական վսեմ տա-  
ղանդի նկատմամբ :

Իսկ Մոսկուայի մամուլն՝ որ առիթ ու-  
նեցած է տեսնելու և քննադատելու եւ-  
րոպայի նշանաւորագոյն քառիները ,  
առաջին անդամէն իսկ եղական հանձա-  
րի մը գոյութիւնը կը նշմարէ : Այսպէս  
Ռուսսկիա Վեդոմոստի կըսէ թէ ո՞չ Ռու-  
սի և ո՞չ հռչակաւոր իտալացի Սալվինի  
կը հաւասարին Պ. Աղամենի՝ Համէթի  
գերին մէջ : Իսկ Մոսկովսկի Լիստոկ լը-  
րագիրը կը խոստովանի թէ « Աղամեն  
այնպիսի Համէթ մ'է , ում կրնայ նա-  
խանձիլ Եւրոպական ո և է թատերա-  
բեմ » :

Այնուհետեւ Պ. Աղամեն կ'սկսի

պարբերաբար ներկայացումներ տալ  
Մոսկուայի զանազան թատրոններու մէջ ,  
և օր ըստ օրէ աւելի կը գրաւէ հասա-  
րակութեան համակրանքը իւր բարձր  
տաղանդով , մինչ այն աստիճան որ «Ե-  
րաժշտական և թատերական Հանդէս» ը  
իւր 12 թուեհամարի մէջ , կը բացագան-  
չէ ստպէս « . . . Հայագգի գերասան  
Աղամեն հրաշքներ կը գործէ Պուշկինի  
թատրոնին մէջ . . . » :

Մարտի 18 ին , գրական երեկոյթ մը  
կը տրուի ի նպաստ Պ. Աղամենի : Այդ  
երեկոյթ իւր բազմութեամբն և մանա-  
ւանդ չքեզութեամբը կը ներկայէ եղա-  
կան տեսարան մը և կը թողու զմայլելի  
տպաւորութիւն յոգնախուռան հանդիսա-  
կանաց վրայ :

Այդ երեկոյ Պ. Աղամենին կը կատարէ  
մի քանի հատուածներ « Համէթ » էն ,  
« աւազակներէ » էն , Լերմոնտովի « գեի  
երգումն » , Ա. Եգեկեանի « Տարոնոյ  
ծերը » :

Հանդիսականք կը մատուցանեն Ա-  
ղամենին դափնեայ պսակ , ու ժամա-  
մացոյցի ծանրագին ոսկի շղթայ մը մէ-

տայլէոնով հանդերձ, կենդանի ծաղիկներէ կազմեալ փառաւոր գունջի մը մէջ դրուած։ Սոյն երեկոյթի մասին նկարագրական և քննադատական ընդարձակ յօդուածներ նույիրեցին Մոսկուայի լրագիրները, մինը միւսէն աւելի գովասանական։ «Երաշխտական և թատերական Հանդէս»ը, որոյ կարծիքներն աւելի կշիռ ունին այս պարագային, անբացարելի զմայլմամբ կը խօսի և մի տեղ կը յաւելու «... նա սքանչացուց մեզ «Համէթ» մէջ իւր մէկ ընթացքով» (բեմի վրայ մօր հետ) զոր չենք նշանած, ո՛չ Ռոստիֆ, ո՛չ Սալլինիի, և ո՛չ միւս համէթներու ու համէթիկներու քով։

Ադամեան ոռւս հասարակութիւնը գըրաւելու ուրիշ մասնաւոր պատճառ մը ևս ունի. իւր թատերախաղերն ամբողջովին եւրոպական էին և այս պարագային, եթէ կը գովաբանուէր ոռւսական մամուլէն, կը գովաբանուէր միմիայն իւր տաղանդի կատարելութեան համար, զի պազով ալ ոռւս չէր, սակայն երբ կ'ոկոի և մի քանի բուն ոռւսական թատեր-

գութիւններ ևս ներկայացնել, այն ժամանակ լիովին կը տիրանայ ոռւս հասարակութեան համակրանաց։ Եւ որ զարմանալին է, Սդամեան այդ ոռւսական դերերու մէջ անդամ, կը գերազանցէ ոռւսաց ամենաերեւելի դերասանները։ Այսպէս Լերմննոտովի «Դիմակահանդէս» ողբերգութեան Ներոս-Արքենինի դերի մէջ, որ ցայն վայր նշանաւորագոյն կը հսնգիսանար Պիսարէֆ, Սդամեանի երեւմամբ կը նսեմանայ Պիսարէֆի տաղանդը։ Աավրեմինենիս իզվեստիա խօսելով «Դիմակահանդէս»ի ներկայացման մասին, կ'ըսէ և Սդամեան այն աստիճան ընտիր կերպիւ կատարեց Արքենինի դըժուարին և ապերախտ դերը, որ ամեն գովասանքներէ դեր ի վեր կը հանդիսանայ, և այդու ցոյց տուաւ թէ ո՛չ միայն տաղանդ ունի, այլ ունի և՛ խորաթափանց միտք և՛ զննական ընդարձակ շնորհք . . .»։

Փարիզի հոչակաւոր նկարիչ Ժորժ Պէքեր, որ ներկայ եղած էր Համլիքի մի ներկայացման, հետեւեալ նամակն կը գրէ Պ. Սդամեանի։

Moscou 23 Octobre 1883

Cher monsieur!

Je viens vous dire combien j'ai été sensible à l'amabilité avec laquelle vous m'avez envoyé un billet pour Hamlet.

Je vous suis d'autant plus reconnaissant que vous m'avez donné une grande et belle émotion artistique.

Vous êtes un maître et vous avez joué Hamlet avec une poésie colorée de ce beau sang qui coule dans vos veines.

J'emporte et je garderai précieusement le souvenir de cette exquise soirée que je vous dois.

Croyez, Cher monsieur, ma sincère admiration et à ma profonde sympathie.

GEORGE BECKER

Պ. Աղամեան մինչեւ 1883 ի վերջերն  
մեաց ի Մոսկուա միշտ ներկայացումներ  
տալով, այնուհետեւ պատրաստուեցաւ

մեկնելու ի Բեղերապուրկ . բայց նախ  
քան այդ, թատերական ուղեւորու-  
թիւն մըրաւ ի Նիժնի Նովգորոդ, ուր  
բացի ժողովրդէն նոյնպէս և մեծ հա-  
մակրանօք ընդունուեցաւ նահանգապե-  
տի պալատին մէջ և շատ անգամ պատիւ  
ունեցաւ է սեղանակից լինելու նմա :

րասանին գալուստը : Պետերբուրգսկայա  
Գագետա լրագիրն սապէս կը խօսի . . . ի  
մօտոյ թատերգական գերասանական հո-  
րիզոնի վրայ , ի վայելս մեր , յերեւան  
պիտի գայ թատերական նոր «աստղ»  
մը , ոյր մասին այնչափ շատ խօսուե-  
ցան այս տեղ և արաւասահմանի մէջ :  
Մեր խօսքը հրաշալի-դերասան Պ. Ա.-  
դամեանի մասին է :

Ադամեան այս տեղ ևս Մոսկուայի նը-  
ման փառաւոր ընդունելութիւն կը գըտ-  
նէ : Նովոստի , Նովոյի Վրեմիա , Խս-  
կաստիլոյ և միւս առաջնակարգ թեր-  
թերը ընդարձակ քննադատական յօ-  
դուածներ կը նուիրեն : Այդ յօդուած-  
ներու մէջ կարեւորութեան արժանի են  
յայտնի ոռւս գրագէտ Զոյկոյի քննա-  
դատականները , Նովոստիի մէջ : Սակայն  
կարծեաց կարեւորութեան տեսակէտով ,  
լաւագոյն է յառաջ բերել աստ Խսկաս-  
տիլոյ ( արուեստ ) հանդէսի մի յօդուա-  
ծըն միայն , զի դորա կարծիքներն ա-  
ւելի մեծ արժէք ունին արուեստագի-  
տական տեսակէտով :

« Հայազգի գերասան Պ. Ադամեան  
առաջին անգամ բեմ ելնելով «Համեթ»ի

## Դ.

1884 ի Յունվարի երկրորդ կէսին՝ Ա.-  
դամեան կը մտնէ Ռուսիոյ մայրաքա-  
ղաքը :

Շուրջ մէկ տարուան ընթացքի մէջ Ա.-  
դամեանի հռչակն այնպէս ծաւալած էր  
Ռուսաստանի մէջ , որ շատ տեղեր գե-  
րահրաշ ու առասպելական գաղափար-  
ներ էին կազմած նորա վրայ . այսպէս  
Բեդերապուրկի հրէական լրագիր մը յի-  
շատակելով նորա կենսագրութիւնը կը  
յարէ թէ , նա կը խօսի եւ կը խաղայ  
տաներկու լեզուներով . . . :

Բեդերապուրկի առաջնակարգ թերթե-  
րը հանդիսապէս կ'ողջունեն , Հայ-դե-

գերին մէջ, լիովին արդարացուց այն  
գովասանական յայտարարութիւններն,  
որ կը հրատասարակուէին Մոռկուայի  
լրագրուց մէջ: Շեքսիիուի ողբերգու-  
թիւնն այնպէս յօրինուած է որ «Համ-  
էթ»ի կերպարանքը, սկիզբէն մինչեւ  
վերջ յինքն կը գրաւէ հանդիսատէնե-  
րու համայն ուշադրութիւնն: Հետեւա-  
պէս, նորա գերը վերին աստիճանի ե-  
րախտահացոյց է գերասանի համար: սա-  
կայն և այդ կէտի մէջ է նորա դըժուա-  
րութիւնն, այդ իսկ է և պատճառն որ  
Համէթի լաւ դերակատարները մատով  
կը համրուին: Համէթը արդէն չափա-  
զանց աեսած է ժողովուրդն, նորա գե-  
րը գժուարամատչելի գեր մ'է: Դերա-  
կատարի համար, անկարելիութեան աս-  
տիճանի, գժուարին էյնքն մարմաւո-  
րել Դանիմարքացի տժգոյն երազացնօրին  
անձնաւորութիւնը: Ուստի, և շատ  
անդամ հանդիսատէները գժգոհու-  
թեամբ կը մեկնին թատրոնէն, և յա-  
ճախ մինչեւ իսկ նախատուած կ'զգան  
Մեծին Շեքսիիուի յիշատակը:

«Պ. Աղամեան գիտցաւ յաղթական

գուրս ելնել բոլոր գժուարութեանց մէ-  
ջէն: Առանց լինորինակելու, առանց  
նմանելու Համէթի հռչակաւոր կերպա-  
րանովներուն. նա ստեղծած է, թերևս,  
փոքր ինչ ինքնագիւտ, և լիովին ար-  
ուեստագիտական տիպ մը, ամենաման-  
րամասն կերպիւ ուստւմնասիրուած, հը-  
րաշլի նրբութեամբ կոկուած տիպ:  
Ներկայացման այդ ինքնագիւտ սեփա-  
կանութիւնը կը կայանայ յայնմ, որ Ա-  
գամեան համէթի խօսքերու և գործո-  
ղութեանց մէջ ներմուծած է շատ աւե-  
լի կիրք և կորով քան Ռոսսի և աշ-  
խարհակաչակն Սալգինի: Այս յատկու-  
թեան չնորհիւ Շեքսիիուի Հերոս-Ա-  
ղամեան աւելի փառաւոր և վեհ կեր-  
պարանք ստացած կ'երեւէր յաչս հան-  
դիսատես հասարակութեան, որ արդէն  
համակուած էր գերազմայլ յափշտակ-  
մամբ ու անհուն սիրացմամբ . . . :

«Առաջին անդամն է որ այս օրինակ  
բան մը կը տեսնենք ուստական թատե-  
րաբեմին վրայ: Վատ չէր լինէր եթէ  
մեր «արքունի» գերասանները հետեւէին  
և բան սովորէին իրենց հայագգի ար-

ուեստակցէն, որ անտարակոյն, թէեւ  
չունի վկայագիր, այլ սակայն ունի ար-  
ուեստագիտական նուրբ ճաշակ և դե-  
րասանական կորովի տաղանդ (<sup>1</sup>) . . .

« Շատ ցաւալի բան պիտի լինի, եթէ  
թէդերպուրկի հասարակութիւնը բաղդ  
չունենայ մի անգամ ևս աեսնելու զնա  
այդ մի և նոյն դերին մէջ, միայն թէ  
կայսերական թատերաբեմի վրայ՝ և օ-  
րինաւոր դերասաններու մասնակցու-  
թեամբ, որովհետեւ Պ. Ա. դամեան «Համ-  
լէթ»ի զանազան տեսարաններու մէջ կը  
դերագանցէ քան զԱլլինի և Ռոսսի :

Ի նկատ առնելով իսկուստվովի և առ  
հասարակ մամուլի քննադատական յօդ-  
ուածները կը տեսնենք որ միշտ ծանրա-  
գոյն կարեւորութեամբ կը խօսուի Համ-  
լէթի խաղին վրայ : Ասոր պատճառն այն

(\*) Ապարդիւն է յառաջ բերել դերի մանրա-  
խյութնեութիւնն, քանի որ Համլէթի նիւթն և  
խաղը, բոլորօվին անծանօթ լինելով մեր հասարա-  
կութեան, գրութիւնն ալ անհասկնակի պիտի մը-  
նայ: Ահա այս մի և նոյն պատճառաւ չենք թարգ-  
մաներ և Զոյկոյի երեւելի քննադատական յօդ-  
ուածները :

է որ Համլէթ գերմարդկային տիպ մը  
լինելով առաջնակարգ դերասաններու  
փորձաքարը կը համարուի: Այդ դերի  
կատարեալ ըմբռնման համար գժուարու-  
թեանց կը բաղվին նոյն իոկ աշխարհիս  
ամենէ աւելի հանճարաւոր գլուխները,  
այդ դերի առաջ նսեմութեան կը պար-  
տաւորի ենթարկել Ռոսսի և Սալվինիի  
նման չնաշխարհիկ դերասաններու փայ-  
լը: Մարդու իւր երեւակայութեան հան-  
դէս բերելով Համլէթի տիպարը, կը դո-  
ղայ զարմացումէն, զի Համլէթ այնպիսի  
անձնաւորութիւնն մ'է որ իւր մէջ կը  
մարմնաւորէ համամարդկային բնաւորու-  
թիւնը մէկ ծայրայեղութենէն միւնչեւ միւս  
ծայրայեղութիւնն: Համլէթ թէ՛ մի ան-  
հատ է և թէ՛ մի թշուառ մարդկութիւն  
թէ՛ մոլեւանդ և թէ՛ կատարեալ ա-  
զատամիտ, թէ՛ չարագործ և թէ՛ ազ-  
նիւ սիրու ու քնքոյչ բնութիւն, թէ՛ կաս-  
կած աւոր և թէ՛ հաստատամիտ, թէ՛  
ծնողասէր ու մարդասէր և թէ՛ մար-  
դատեաց, թէ՛ միամիտ ազաւնի և թէ՛  
խորամանկօ օձ, թէ՛ սկեպտիկեան և թէ՛  
ազնիւ ու մտերիմ բարեկասմ, թէ՛ պար-

գամիտ մարդ և թէ՛ խորախորհուրդ հոգերան , թէ՛ թերեւամիտ երիտասարդ և թէ՛ երեւելի փիլիսոփայ : — Ո՞չա՛ այս է այն բազմակնձիռ տիպարը զօր կ'անձնաւորէ Աղամեան վսեմագոյն յաջողութեամբ :

Աղամեան շատ գժուալին ժամանակի մէջ կ'ակսի խաղալ Մոսկուայի և Բեդերապուրկի բեմերու վրայ , այսինքն այնպիսի ժամանակ երբ գեռ նոր մեկնած էին այնտեղէն Ռոսի և Սալվինի , որ կը համարուի « Թագաւոր թատերգութեան » . հետեւաբար այդպիսի աշխարհածանօթ գերասաններէ յետոյ Ռուս հասարակութիւնը կատարեալ անտարբերութեամբ և , հաւանօրէն , հեգնութեամբ իսկ պիտի ունկընդուրէր հոյ գերասանի մը գալուստը : Մակայն որպէս կը նշմարենք փաստերէն , Հոյ Դերասանին ընդունելութիւնը կը գերազանցէ ամեն ակնկալութիւն :

Աղամեան Ռուսիոյ կրկին մայրաքաղաքաց մէջ հայ լեզուաւ ներկայացնելով Համբէթ , Օթելլոյ , Աւազակներ և այլ հանճարաւոր թատերգութիւններ , բարձ

բացուց օտարներու առաջ պատիւն հայ գրականութեան , որ ցայն վայր բոլորովին անմշակ և աղքատիկ գրականութիւն մը կը համարուէր յաչս եւրոպական գրադիտաց . ի Մոսկուա և ի Բեդերապուրկ բազմաթիւ առաջնակարգ ուսու և տեղական եւրոպացի գիտնականներ , այցելութիւն տալով Պ . Աղամեանի զարմացմամբ և հետաքրքրութեամբ կը հարցնէին թէ միթէ հայերէն թարգմանուած կան Շիլերի , Շեքսփիրի , Կէոթէի և նմանօրինակ հանճարներու հեղինակութիւնները . և նմանապէս ուրիշ զանազան տեղեկութիւններ՝ հայ գըրականութեան մասին :

1884 ի ապրիլ 30 ին Պ . Աղամեան կուտայ ի Բեդերապուրկ առաջին այցելութեան վերջին ներկայացումն , որմէ յետոյ պիտի երթար գաւառական քաղաքները իսկ աշնան դարձեալ վերադառնար Յեղերպուրկ : Այդ երեկոյ Աղամեան կը խաղայ Քորբատոյի դերը : Ներկայացման պահուն թատրոնը և փողոցը լի էին անհուն հասարակութեամբ : Վերջին արարուածէն յետոյ թատրոնը կ'ս :

սկըսի թնդալ որոտագին ծափահարութեամբ և բազմաթիւ անդամներ ի տես կը կոչուի Աղամեան : Ապա , պատերազմէն վերադարձող յաղթականի նման աղմկայոյզ կեցցլներու և ծափահարութեանց միջեւ կ'առաջնորդուի իւր բնակարանը յոգնաթիւ և ոդեւորեալ բազմութեամբ մը ըրջապատուած :

Նովոյէ Վրեմիա , այս վերջին ներկայացման առթիւ սապէս կը յայտարարէ իւր մայիս 2 թուակիր քննադական յօռւածին մէջ « առհասարակ պէտք է խոստովանիլ թէ Աղամեան իւր խաղին մէջ անպայման կերպիս տաղանդաւոր ։ » : Նմանօրինակ գովարանական յայտարարութիւններ կ'ընէ և ժուռնալ ՏՅ Ա. Բեդրսապուրի մայիս 3 ի թերթին մէջ :



Ե .

Մոսկուայի և Բեդրսապուրկի լրագրաց արտակարգ գովաստնքները , Աղամեանի վերաբերմամբ , խորին տապաւորութիւն թողած էին գաւառական քաղաքներու մէջ , հետեւապէս ամեն ուրեք անհամբեր բերկրութեամբ կ'սպասէին երեւելի Հայ Գերասանի գալստեան :

1884 յունիս 4ին , Աղամեան բեմ կ'ելնէ Աստարխանի մէջ : Տեղոյն Համանուն լրագիրը ի մէջ այլոց կ'ընէ հետեւեալ կարեւոր դիտողութիւններն , Քորրատոյի ներկայացման առթիւ , որ թէե պարզ , այլ այդ պարզութիւն իսկ կ'արտափայլեցնէ Աղամեանի կատարելու-

թեան նկարագիրը . « . . . Հայերէն երկու բառեր միայն ծանօթ են ինձ բարով և մատաղ , սակայն ինչ հարկ գիտակ լինելու խաղցուած ներկայացման լեզուին , երբ նորա խաղցողը Ադամեանն է : Եթէ կայ աշխարհիս վրայ մարդ մը , ոյր միաքը կարելի է կարդալ նորա դէմքի և մարմնոյ շարժումներուն մէջ , այդ մարդն անտարակոյս ոչ ո՛ք կրնայ լինիլ Եթէ ոչ Ադամեան : Սնդի՛կ , որ ամենանուրը ձեւերու կը փոխուի , այդ կենդանի մետաղն , որ կընթանայ չչին թեքմամբ մը , այդ փայլուն զանգուածն , որ կը բաժնուի հազարաւոր արծաթաշող կաթիլներու և վերստին կը ձուլուի հայելաձեւ կիսագունափ մը — Ահա՛ , թէ ինչ է Ադամեան իւր դերին մէջ : Կարծեմ թէ չկայ մի բառ , մի գիծ և ոչ իսկ մի նշանախեց , որոց իմաստն սմբոնած չը լինի նա : Եւ այս ամենը կը հաղորդէ հանդիսատես հասարակութեան իւր ամբողջ էութեամբ , իւր կերպարանքով և ձայնի արտայայտութեամբն : Որպիսի նրբութիւն , որչա՛փ զեղումն և որչա՛փ իրականութիւնն . . . » :

Աստարիսանէն Պ . Ադամեան կը շարունակէ իւր ըրջագայութիւնն դէպի Ռոստով , Խարքով , Քիչինել ևն : Եւ 1885ի մայիսին կը մտնէ Ռուսիոյ սրբազն քաղաքն - Քիչվական կը տեղացւոց հրատիրանաց վըրայ : Աւելորդ է կրկնել թէ Ադամեան այնտեղ ևս մեծ ընդունելութիւն կը գտնէ և կը գրուատուի արժանավայել գովասանքներով :

Քիչվէն Պ . Ադամեան հասարակութեան բաղճանաց համեմատ կը շարունակէ իւր թատերական ուղեւորութիւնը զանազան քաղաքներ . կրկնէ և կրկնէ անգամներ այցելելէ յեաց Մոսկուա , Բեդեպուրի և Թիֆլիս , 1887 հոկտեմբերին կը մտնէ Օտէսա , ուր ի վազուց անհամբեր կըսպասէին Յաղթական Ողբերգուին : Այդ մի և նոյն ամսի 29ին Պ . Ադամեան բեմ կ'ելնէ առանց մեծադղորդ ազդարարութեանց , աննշան թատրոնի մը մէջ , որոյ տեսարանական զարդերը գունատած էին փոշիէն և հնութենէ , եւ ուր գերասաններու գլուխը կը հպէր առաստաղին : Ահա այսպիսի թատրոնի մէջ առաջին անգամ կ'սկսի խաղալ Ա-

դամեան և այն եւս «Համեթ» . . . պարզապէս աներեւակայելի է այսպիսի բան։  
«Այնու ամենայնիւ, կը գրէ Օտեսսկի  
Վեստնիկ իւր հոկտեմբեր 31 թուին մէջ,  
շատ երեւելի յաջողութիւն ունեցաւ Պ.  
Աղամեան։ Երբ բեմ ելնելով քանի մը  
խօսքեր արտասանեց, ամբողջ հասարա-  
կութիւնը իրը մէկ անձն, բնազդաբար  
զգաց թէ իւր առաջ կեցողն արուեստա-  
գիտական մեծ հեղինակութիւն մ'է. այլ  
ևս աչքի չ'էր ընկներ բեմի և թատերա-  
պրահի աղքատիկ կազմաւորութիւնը եւ  
խումբն ալբոլորովին նսեմացած կերեւէր։  
ամբողջ հանդիսականաց աչքերը միայն  
Աղամեանը կը տեսնէին, իսկ ականջնե-  
րը նորա հեշտալուր ձայնը միայն կը լը-  
սէին։ Շնորհալի ողբերգուին յառաջ-  
դիմութիւնը կատարեալ էր։ Արուար-  
ուած է արարուած կը վսեմանար Աղամ-  
եան, և իւր խաղն արուեստագիտա-  
կան ճշմարիտ յաղթանակի կը փոխա-  
նակուէր։

«Զափազանց յափշտակուած ենք Ա-  
դամեանի նշանաւոր խաղովն, և տակա-  
ւին սթափուած չենք նորա ձայնի դիւ-

թական հնչիւնէն : Կատարեալ համարձա-  
կութեամբ կարելի է ըսել թէ Աղամ-  
եանի յառաջդիմութիւնը Համիլրի մէջ  
դերազանցեց ամեն ակնկալութիւն։ Ո՞չ  
Սալվինի, ո՞չ Ռոսսի, ո՞չ Բոսարտ, ո՞չ  
Պատ Շայ, եւ վերջապէս ո՞չ մեկ աշխար-  
հանոցակ դերասան տուած է մեզ այն-  
պիսի անխարդախ եւ կատարելատիպ  
Համիլր, զոր տուաւ մեզ Պ. Աղամեան  
. . .։ Համիլթ-Աղամեանի մասին միեւ-  
նոյն յայտարարութիւնը կ'ընէ և նովո-  
րասիկի Թնդրաֆ լրագիրն իւր նոյեմբեր  
3 թուին մէջ « . . . որչափ կը յիշեմ, ո՞չ  
Պառնայ և ո՞չ Յոսարդ բարձրացած են  
գեղարուեստական այսպիսի կատարելու-  
թեան . . . », իսկ Օտեսսայի Մեդութեր-  
թըն « լինիլ թէ չը լինիլ » մենախօսու-  
թեան համար նոյեմբեր 8 թուին մէջ  
կըսէ « Այս մասին Աղամեանի հետ ոչ ոք  
կրնայ մրցիլ . . . » :

Նոյեմբեր 3ին Աղամեան, Երկրորդ  
անգամ լինելով, բեմ կ'ելնէ Օքէլլոյի  
դերի մէջ, այսուեղ ևս Հայ դերասանն  
այնպիսի հրապոյր կ'ազդէ, որ կ'արժա-  
նանայ Օտեսսայի լրագրաց հրաշալուր

գովասանութեանց . այսպէս նովորոխսկի Թելեղբաժ իւր ընդարձակ , նոյեմբեր 5 թուակիր , քննադատական յօդուածին մէջ կըսէ « . . . Այս անգամ Ադամեան ինքինքն ալ գերազանցուց . . . » ապա մանրամասնօրէն կը նկարագրէ խաղի առաւելութիւններն , որոնք ինքնադիւտ սեփականութիւն են միմեայն Պ . Ադամեանի , Դարձեալ , այն նկարագըրութեան շարունակութեանը մէջ , « . . . Այնաեղ ուր Ադամեանի ձայնը կ'սկսի ևսուիլ բեմակողմի ետեւէն , այն տեղ Ադամեան այլ եւս գերազանցած է մարդկային արուեստի չափ ու սահմանն եւ մոած է աստուածային արուեստի զբրջանին մէջ : Բեմակողմի ետեւէն կը հնչէ Հայ-Օթելլոյի ձայնը , բայց մարդկային ձայն չէ այդ , այլ երկնային որոտում մ'է որ կը մաքառի բնութեան աարերքներուն հետ : Սոսկալի դղրդիւններ , կատաղի մոնշիւն կը պակուցանէ զմարդ և սարսուազդեցիկ դող մը կ'սկսի ընթանալ իւր երակներու մէջէն : Օթելլոյ , վայրագ և կատաղի , կը յարձակուի կասիոյի և Ռոտրիկոյի վրայ , որոնք կը կըս-

ուին իրարու հետ . . . » միենոյն լրագիրն այս առթիւ կը յայտնէ թէ Ադամեան առ հասարակ խորապէս ըմբռնած է Օ-թելլոյի առանձնաւորութիւնը (քարագըրեր) և խաղի ժամանակ , ոկրէն մինչեւ վերջ կատարելապէս կը պահպանէ զայն իւր անձին վրայ : « Այս չնորհք ամենաբարձր գերասաններուն իսկ հազիւթէ արուած է : Իսկ այնտեղ ուր Եակոն կը թունաւորէ Օթելլոյի հոգեկան անդորրութիւնն , այնտեղ Ադամեան այլ եւս հասած է այնպիսի բարձրութեան առ որ չէ հասած մինչեւ անգամ Սալվինի , որ այդ գերին մէջ եւրոպական մամուլի կողմանէ ճանաչուած է իրր Գլուխու-Գործոց (Chef d'oenevre) : Օտեսսի վեստնիկ ոչ նուազ յափշտակութեամբ կը իսօսի այս առթիւ իւր նոյեմբեր 4 թուին մէջ , « . . . Ադամեանի Օրելլոն անլուր սքանչացումով համակեց ամենուս : Ի « տեսւներուն վերջ չը կար Երկրորդ արարուածի վախճանին հանդիսատեսներն այլ եւս յափշտակուած մոլեգին զմայլմամբ , աղմկայոյզ ցոյցերով կը թնդացընէին թատերասրահը : Պ. Ադամեան թէւ

Կ'արտասանէր հայերէն, սակայն գիտցաւ  
ամբողջովին կախարդել հասարակու-  
թեան ուշադրութիւնն Ամենքը կը հաս-  
կընային զնա առանց հայերէն իմանալու :  
Նորա ներդաշնակոլոր գիւթական ձայնը,  
ներքին, անխարդախ զգացման զեղումը  
և ստեղծականութիւնն շատ իսկ են կէտ  
առ կէտ հասկացնել տալու իւր լեզուն  
որ անծանօթ է մեզ :

Այդ մի և նոյն լրագիր իւր նոյեմ-  
բեր 5 ի թիւին մէջ հետեւեալ կերպիւ  
կը գրէ նոր յօդուածով մը .

« Նոյեմբեր 3 ին երբ կ'երթայինք  
թատրոն պէտք է խոստովանիլ, թէ բա-  
ւական կը վարանէիք : Մաւրիտանացի  
Մաւրի գերին մէջ Օտեսացիք տեսած  
են այնչափ բեմական քրիֆեներ, որ կը  
տարակուսէին թէ արդեօք Ադամեան  
պիտի կարենայ անբիծ ազատուիլ այդ  
գլխաւոր խաղի մէջէն : Մի ժամանակ,  
Օտեսայի մէջ, այդ գերը կատարած է  
նշանաւորն Օլրիճ և ես շատ լաւ պահ-  
պանած եմ յիշողութեանս մէջ մեր հա-  
սարակութեան ժամանակակից ցնծու-  
թիւնը : Այնուհետեւ այդ գերը կատա-

րեց էռնեստոյ Ռոսսի և ապա Սալվինի ,  
թատերակական բեմի սոյն հանրածանօթ-  
թագաւորը : Սակայն Ադամեան իւր խա-  
ղով ոչ միայն չը զարթեցուց այդ մեծ  
հեղինակութեանց յիշատակը . այլ ցոյց  
տուաւ թէ ինքն ալ համահաւասար հան-  
ճար մ'է : Պ. Ադամեան բաւական կը  
տարբերի իւր նշանաւոր մրցակիցէն Օ-  
թելլոյի առանձնաւորութեան մեկնու-  
թեանը մասին , այլ սակայն կը ներկա-  
յացնէ ամենային կատարեալ եւ բա-  
ցարձակապէս ձշմարիտ տիպ մը .

« Ադամեանի կեղծումն երբէ՛ք նման  
չէ Սալվինիի կեղծման : Հայ Ողբերգուն ,  
ողբերգութեան մէջ սփռուած , ակնար-  
կութիւնները կը մեկնէ ճշտագոյն իմաս-  
տով և կը կերպարանէ Օթելլոն իրը ա-  
նազարտ արաբացի : Դէմքը մթին է և  
գրեթէ սեւ , այտերու ցցուած մասերը  
լայն են և դուրս ինկած , շուրթերը մեծ  
են և կը ծածկեն երկու շարք մաքուր և  
սպիտակ ատամներն , որ յատուկ են ա-  
նապատի խսկական զաւակներուն միայն :  
Ականջներէն անցուցած են խոշոր օղեր ,  
իսկ ձեռներուն՝ ապարանջաններ : Բա-

ւական է միայն որ Օթելլոյ Ադամեան  
երեւի թատերաբեմի վրայ և սկսի խօ-  
սիլ, այն ժամանակ մարդ իսկոյն կը  
համոզուի թէ Արեւելքի տիպարական  
ներկայացուցիչն է, թէ քաջարի և ուղ-  
ղամիտ բնութիւն մէ, որ սովորած է  
աներկիւղաբար դիմագրաւել ամեն վը-  
տանգներու : Օթելլոյի արեւելցիական  
դոյնը ճարտարապէս պահուած է սկզբէն  
մինչեւ վերջ, մասնաւորապէս, լիովն  
կարտայայտուի կեղծումներու և շար-  
ժումներուն մէջ . . . »

Շատ երկար կը լինի յառաջ բերել  
աստ Հայ-Օթելլոյի նկարագիրը, վերո-  
յիշեալ վկայութիւններն իսկ բաւական  
են հաստատելու նորա անզուգական  
տաղանդն : Բայ վկայութեան մի և նոյն  
լրագրին, Ադամեան աննման է երրորդ  
արարածի մէջ, թէև լեզուն անձանօթ,  
սակայն դերասանի իւրաքանչիւր բառը  
խորապէս կը յուզէր հանդիսատեսները :

Ներկայացման աւարտումէն յետոյ  
զարդ տասն եւ վեց անգամ « ի տե՛ս »  
կը կոչուի Ադամեան :

Նոյեմբեր 8 ին Պ. Ադամեան կը ներ-

կայացնէ Ուրիել Աքոսրա գերմանական  
ողբերգութիւնն : Ադամեան, որպէս  
միշտ, այս խաղի մէջ ևս կը հանդիսա-  
նայ իր կատարելատիպ գերասան, ըստ  
վկայութեան Օտեսայի ոռւս և գերմա-  
նական լրագրաց :

« Առաջ, կ'ըսէ Թէլեղրաֆի յօդուածա-  
գիրը, տեսած էի զՊառնայ : Նա տպա-  
ւորած էր յիշողութեանս մէջ Ուրիէլի  
համակրելի պատկերը, այնուհետեւ չէի  
ուզեր տեսնել ուրիշ գերասան մը նոյն  
գերին մէջ, որպէս զի չը ջնջուէր մտքէս  
այն քաղցր պատկերը, սակայն, յիրա-  
ւի, չի գիտեմնեղանամ թէ՞սքանչանամ  
Ադամեանի վրայ, որ վանելով հոգւոյս  
մէջն այն պատկերը, նորա տեղը քան-  
դակեց մի ուրիշ Ուրիէլ : տեսաց ոչ մի-  
այն ա՛յն կարող Ուրիէլն, հապա, Հայ  
ճարտարագէտը բացաւ իմ հանդէպ այդ  
կարող մարդու հզօր հոգւոյն խորն և  
լուսաւորեց նորա հոգւոյն ամենագաղո-  
նի խորշերը : Ուրիել-Աքոսրա գրէթէ  
Համէթի չափ դժուարին գեր մ'է : Նա  
այն տեսակ հազուագիւտ անձերէն է, ո-  
րոց սաստիկ զգայուն հոգին կատարեալ

ներդաշնակութեամբ կընթանայ հզօր  
և թափանցիկ մտքին հետ : Այդ անձն,  
ի վերջոյ , հոգերանական այնպիսի բազ-  
մակողմանի յատկանիշեր կը մարմնաւո-  
րէ , որ մեծ տաղանդ պէտք է զայնս ա-  
մենայն բնականութեամբ պատկերակցե-  
լու համար : « Ադամեան , կըսէ Թէլի-  
գրաֆ , հանձար մ'է ( génie ) Ուրիէլ-Ա-  
քոսթայի խաղին մէջ : Հոգերանական-  
բնախօսական տարրը նորա խաղի մէջ  
կ'ուրուագծուի այն աստիճան իրական  
չժգութեամբ , որ կը հարկադրէ հանդի-  
սատէս հասարակութեան մուանալ իւր  
շրջակայն և երեւակայել զինքն մեռեալ-  
ներու միջեւ : Հայ դերասանի ամբողջ  
մարմինը կը դողայ , դէմքը պոտած է  
մեռելային դժգունութեամբ , պաղ  
քրտինք մը կը ծած կէ ճակատն , շնչեղ-  
ձուցիկ բեկրեկուն ձայնը կ'ընդհատի  
իւրաքանչիւր վայրկեան : Պաղ քրտինքը  
միշտ աւելի և աւելի կը շատանայ և նա  
ամեն անգամ ձեռներով կը սրբէ այլա-  
գունած կերպարանքը , իսկ աղկէ երկու  
վայրկեան յետոյ , ձեր դիմացինն մարդ-  
չէ այլ ևս , հապա՛ սոսկալ ուրուական

մ'որ կը շարժուի այս ու այն կողմէ կիս-  
կըտուր ձայներ հանելով . . . Սոսկում կը  
պատէ ձեզ , ընկճեալ երեւակայութիւնը  
կ'ուրուագծէ ձեր հանդէս գերեզման-  
ներ , մեռեալներ . . . { լ.յո՛ , Ադամեան ոչ  
միայն գերասան է այլ արտակարգ տա-  
ղանդ մ'է , լաւագոյն ճարտարագէտ մը  
և մեկնիչ ժամոնակակից թատերգական  
գործոց » :

Ադամեան հետզհետէ այն աստիճան  
բարձր գնահատման կ'արժանանայ , որ  
միահամուռ փափաքանաց համաձայն կը  
յաճախէ իւր ներկայացումները :

Նոյեմբեր 12 ին կը խաղայ Դատա-  
պարտեալի ընտանիք նշանաւոր թա-  
տերգութիւնն , զոր բաւական առաջ  
ներկայացուցած էր անդ Սալիինի : Երբ  
Ադամեան ըեմ ելաւ Սալիինիի այդ ա-  
ռաջնակարգ դերին մէջ , ամեն ոք կ'սպա-  
սէր բաղդատել անդ Սալիինիի և Ադա-  
մեանի հանձարներն , Քորրատոյ-Ադա-  
մեան նախ չերեւիր այնպէս , որպէս էր  
Սալիինի , սակայն յետոյ ինչպէս կը վը-  
կայէ վւատնիկ , իւր կնոշ հետ հաշուուե-  
լու վայրկենէն սկսեալ՝ Ադամեանի յա-

ռաջադիմութիւնը կ'աճի անընդհատ և  
թունաւորման սոսկալի տեսարանին մէջ  
կը հասնի ծայրագոյն կատարելութեան։  
Համարձակօրէն կարելի է յայտարարել  
թէ մինչեւ այժմ ո՛չ մի գերասան կրցած  
է այսպիսի տպաւորութիւն գործել։  
Քորրատոյի թունաւորման առաջին նը-  
շաններու երեւման պահուն, հասարա-  
կութեան վրայ տիրեց արտասովոր սար-  
սուռ մ'օր անմիջապէս փոխուեցաւ զար-  
հուրելի սոսկումի։ Շատ հանդիսատես-  
ներ բնազդաբար ելան իրենց թիկնա-  
թոռներէն, իսկ կանայք ծածկեցին ի-  
րենց աչերը . . . Թատերաբեմի վրայ,  
հասարակութենէն հինգ քայլ հեռու օր-  
հասական ջղաձգութեամբ կը տանջուէր  
Քորրատոյ։ Նորա ջղային կարկամարթիւն-  
ները, նորա հեծութիւնները, ոգեսպառ  
բերնէն դուրս թռչող անորոշ բառերը,  
այս ամեն այն աստիճան բնական էր,  
որ շատերը կը խորհէին մի՛ գուցէ Ա-  
գամեան պատահաբար թունաւորած լի-  
նի ինքզինք։ Եւ երբ իջաւ վարագոյրն,  
և աղմկայոյզ ցոյցերու վրայ համեստո-  
րէն դուրս ելաւ չնորհալի գերասանը,  
այն ժամանակ հանդիսականներու ցնծու-

թեան չափ չկար։ Անթի՛ւ անգամներ ի  
տես կոչուեցաւ Քորրատոյ։ Այդ հան-  
դիսականներու մէջ կը գտնուէր մի ու-  
րիշ Քորրատոյ, չէ թէ աշխարհային իշ-  
խանութեանը դատապարտեալ Քորրա-  
տոյ մը, այլ բարոյական ու հոգեկան  
տանջանաց զոհ եղած Քորրատոյ-Թովկ-  
հաննէս Աստուածատուրեան Հայ երի-  
տասարգն որ Աղամեանի խազէն յետոյ  
աւելի եւս փափաք զգաց հետեւելու  
Քորրատոյի և տեղի տալու նոցա, որ  
կը մաքառիլ գոյութեան կոփեի մէջ։  
«Տեսած եմ Սալվինին, կը գրէր այդ տա-  
րաբազգն իւր յիշատակարանի մէջ, բայց  
Աղամեան անորմէ աւելի բարձր է այդ  
գերի մէջ, կենաց զուգագիպութիւն մը  
նշմարեցի Քորրատոյի և իմ միջև և սկսայ  
լալ . . .» Այս դէպէէն մի քանի օր յե-  
տոյ անձնասպանութիւն կը գործէ այդ  
յուսակորոյս երիտասարդը։

Նոյեմբերի վերջին կը ներկայացուի Ար-  
քայ Լիր ի նպաստ Պ. Աղամեանի։ Օ-  
տեսայի հասարակութիւնն ուրախալի ըզ-  
գացմամբ կը վերաբերի դէպի այդ հան-  
դէսն և զանազան նուէրներ կը մատու-

ցանէ : Պ . Աղամեան այս դերի մէջ եւս ցոյց կուտայ փայլուն տաղանդ և արուեստի կատարելութիւն :

Աղամեան Օտեսացւոց լիակատար համակրութիւնը գրաւելէ յետոյ, 1888 յունուարին կ'ուղեւորի Ելիսավետգրադ, ուր Նորա յաջողութիւնը կը գերազանցէ ամեն չափ և սահման : Ուռաջին անգամ բեմ կ'ելնէ Համլեթի դերի մէջ, որոյ վերամբ անբացատրելի զմայլումով կը խօսի Ելիսավետգրադի համանուն լրագիրն իւր յունուար 22 թուին մէջ : Իսկ յունուար 29ին կը խօսի Աղամեանի երրորդ ներկայացման՝ այն է Քորրատովի մասին . « Համլեթի և Ռոբին Արքուրայի մէջ մեր թանկագին հիւրը ցոյց տուաւ իւր տաղանդի մեծութիւնը, և պատճառեց մեզ գեղարուեստական ճշմարիտ հաճոյք, իսկ Քորրատովի մէջ՝ գերազանցեց մեր բոլոր յօյսերն : Այս դերի մէջ Աղամեանէն աւելի կատարեալ տիպ ոչ ո՛ք կարող է ստեղծագործել :

« Հռչակաւոր նկարիչ Այլազովսկի իւր վերջին սյցելութեան ժամանակ յօտեսա , նկարչութեան դպրոցի ապշած ա-

շակերտներու ներկայութեամբ երկու ժամի մէջ կը նկարէ գեղեցիկ նկար մը : Ուսանողները կը դիտէին մեծ արուեստագէտի հանճարաւոր վրձինը և կըսքանչանային նորա աշխատութեամբ : Դատապարտեալի ընտանիք ի ժամանակ ևս հանգունատիպ տեսարան մը պարզուած էր մեր առաջ : Դերասանի իւրաքանչիւր շարժմամբ, իւրաքանչիւր բառի յաւելմամբ, ՚Յորրատոյի դէմքն աւելի ևս կը կենդանանար : Եւ երբ իջաւ վերջին արարուածի վարագոյրը, տեսած եղանք կատարելատիպ պատկեր մը, որմէ աւելի կատարեալն՝ մարդկային կարողութենէն վեր է : Բանտէն փախչիլն, և առ համարակ այնուհետեւ, Աղամեան այլ ևս կը թուէր մեզ չէ թէ արհեստական անձնաւորութիւն, մոռցած էինք Աղամեանն, մոռցած էինք թէ թատրոնի մէջ կը գտնուինք, և ակներեւ կը տեսնէինք կենդանի, ամենայնիւ կենդանի Քորրատոն : Այս դերի մէջ Աղամեան ինքզինքն անգամ գերազանցեց և մենք այն համոզման եկանք թէ Քորրատոն անտարակոյս համարելու է Աղամեանի ստեղծագոր-

ծութեան պսակը . . . » յօդուածի շարու-  
նակութեան մէջ նկարագրուած է հան-  
դիսականաց գերազմայլ սքանչացումն և  
դերի կատարելութեան ընդարձակ քըն-  
նութիւնն , որ մեծագոյն հանճարներու  
կարգը կը դասէ զԱղամեան :

Ելիսակէտգրադի մէջ , մասնաւորա-  
պէս , մեծ յուզում կը պատճառէ Աղա-  
մեան : Ամբողջ քաղաքի խօսակցութեան  
գլխաւոր նիւթն էր Հայ արուետագէտը :  
Չորրորդ անգամ լինելով երրեմ կ'ելնէր  
Պ. Աղամեան Արքայ Լիրի դերին մէջ ,  
հասարակութիւնը բաժնուած էր երկու  
հակառակ խումբերու . մին կը պնդէր  
թէ Արքայ Լիր Աղամեանի ստեղծագոր-  
ծութեան ընտրելագոյն զարգերէն մին  
պիտի լինի , իսկ միւսն՝ բոլորովին կը  
տարակուսէր , յայտարարելով թէ Աղա-  
մեան որչափ և մեծ լինի Համլիքի , Քոր-  
րատոյի , Օրելլոյի և առհասարակ միւս  
տիեզերահռչակ դերերու մէջ , այնու ա-  
մենայնիւ անհնար է մի և նոյն կատա-  
րելութիւնը ցոյց տալ Արքայ Լիրի մէջ ,  
որ նոցանէ բոլորովին տարրեր ու երկ-  
դիմի բնութիւն մը կը պատկերացնէ :

Կարծեաց սոյն տարածայնութեան պատ-  
ճառաւ , Լիրի ներկայացման օրը թատրո-  
նը լի էր ակնկառոյց հանդիսականնե-  
րու անհուն բազմութեամբ : Յառաջ կը  
բերենք միայն մի քանի տողեր և լիսա-  
վլուցը ականակի վեստնիկ լրագիրէն Աղա-  
մեանի այդ երեկոյեան խաղի վերաբեր-  
մամբ . « . . . Փողերու ձայնը կ'զեկուցա-  
նէ արքայի երեւումն , և ահա ըեմ կ'ել-  
նէ Լիր Աղամեան և կ'ողջունուի շուն-  
դալից ծափահարութեամբ , գոյնզգոյն  
թուզմի կտորներ , որոց վրայ գլուխած  
էր « Vivat Piotre Ieronimovitch Adamian !! » ձիւնի խոչոր և յորդահոս հա-  
տիկներու նման մեզմորէն վար կը թա-  
փէին և սրահի հանդիսականաց աչերէն  
կը ծածկէին Արքայ Լիրի կերպարանքը . . . »

Աղամեան , ըստ վկայութեան լրա-  
գրական զանտզան քննադատութեանց ,  
այդ գերի մէջ կը մամնաւորէր Լիրի կա-  
տարելատիպ անձնաւորութիւնը : Հան-  
դիսականք , խորին զմայլմամբ համա-  
կուած , թատրոնի դրան առաջ աղմկա-  
յոյզ ցոյցերով կը դիմաւորեն զԱղամեան  
և մի և նոյն եղանակաւ կ'առաջնորդեն  
միւչեւ իւր բնակարանը :

Վերջին ներկայացման երեկոյ , Ելիսա-  
վէտգրադի իգական սեռն բազմնորա-  
գիր , ոսկետառու գեղանկար ուղերձ մը  
կը մատուցանէ Պ. Ադամեանի , ի նշան  
խորին սքանչացման : Նմանօրինակ փա-  
ռաւոր ուղերձ մ'եւս ընդունած է  
Ադամեան Խարքովի կայսերական հա-  
մալսարանի ուսանողներէն 1885 ին :

Ելիսավէտգրադէն Ադամեան կ'ուղե-  
ւորի Քաղան , ուր միւնոյն ոգեւորու-  
թեամր կ'ընդունուի հասարակութեան  
կողմանէ , որպէս Օտեսա և այլուրեք:  
Այդ տեղ ևս մի շարք ներկայացուներ  
տալէն յետոյ Ադամեան կ'աւարտէ իւր  
թատերական ինհամեայ ուղեւորութիւնն  
ի Ռուսիա՝ և յուլիսի վերջերը Քաղանէն  
կը մեկնի իւր մայրենի քաղաքն , ուր  
այսօր գեղարուեստի գնահատողները  
արժանաւորապէս կը տօնէն Մեծ Դե-  
րասանի բեմական գործունէութիւնը :

Ադամեան Ռուսիոյ մէջ , որպէս տե-  
սանք վերոգրեալ անհամար փաստերէն ,  
գնահատուած է իրը առաջին կարգի  
արուեստագէտ . Ինչ հանրային ցոյցեր  
որ եղած են Սալվինի , Ռոսսի , Սարա

Պեռնարի և միւս աշխարհահռչակ դե-  
րասաններու վերաբերմամբ , նոյնն եղած  
կը տեսնենք և Ադամեանի վերաբեր-  
մամբ Ռուսաստանի ամեն կողմերը : Այս-  
պէս ի Թիֆլիս ամեն անգամ Ադամեանի  
ազգերը գրուած էին գունաւոր լապ-  
տերներու մէջ : Միշտ յաղթական ցոյցե-  
րով կ'առաջնորդուէր իւր բնակարանն  
մանաւանդ վերջին ուղեւորութեան ժա-  
մանակ . և մէկ անգամ այն աստիճան  
կը յափշտակուի հասարակութիւնն , որ  
անվերջ կեցցէներու հետ օդի մէջէն դէպ  
ի թատերաբեմ կը ուլացնեն արք իրենց  
գլխարկներն և կանայք իրենց հովհար-  
ներն . Ադամեան բեմ ենելու համար  
հարկ կը լինի ճանապարհ բանալ այդ  
գլխարկներու կյուտերու մէջէն : Օտեսայի  
մէջ արդիլուած էր հանրային ցոյցեր ը-  
նել գերասաններուն , սակայն Օտեսայի  
գլխաւոր կառավարիչն հրամայեց որ այդ  
արգելքն անգործադրելի լինի միմիայն  
Ադամեանի համար . և ժողովուրդն , ամեն  
գիշեր թատրոնէն յետոյ , աղմկայոց ցոյ-  
ցերով կ'առաջնորդէր զնա մինչեւ իւր  
բնակարանն , որ շուրջ մէկ քառորդ

Ժամուան ճանապարհ էր : Վերջապէս , Քիչնեի մէջ , ներկայացումէն յետոյ , երբ Ադամեան կառք նստելով տուն պիտի երթար , սքանչացմամբ մոլեգնեալ հանդիսատեսները բռնութեամբ կարձակեն կառքի ձիերն և իրենք լծուելով , մեծադղորդ հանդիսիւ , կը տանեն մինչեւ իւր բնակարանն : Նմանօրինակ ցոյցեր եղած են և ի Մոսկուա , Բեդերպուրկ եւ այլ ուրեք :

« Ադամեան « Գործադուլ - Դարբնոց ոն Փրանսերէն լեզուաւ արտասանած է ի ներկայութեան Միքայէլ Մեծ Դուքսի , և արժանացած՝ նորա բարձր գոհունակութեան :

Ադամեանի մեծադիր պատկերն հրատարակուած է Սորելիա , Սորելիազա պատկերազարդ հանդէսներու և նովուտի լրագրին մէջ :

Ռուսաստանի լրագրական և հանրային այս ամեն յայտարարութիւններ ու ցոյցեր բաւական են բացարձակապէս ապացուցանելու թէ Ադամեան աշխարհիս ամենամեծ դերասաններէն մին է , մանաւանդ երբ ի նկատի առնունք թէ Ռուսիոյ

մէջ թատերասիրութեան ճաշակն ոչ նուազնրացած է և կատարելագործուած եւրոպայի բաղդատմամբ . իսկ ի Մոսկուա և Բեդերսպուրկ թերեւս գերազանց իսկ է :

Այսու ամենայնիւ ի մօտոյ առիթ պիտի ունենանք իմանալու և եւրոպական մեծ լրագրաց կարծիքն մեր սիրեցեալ Արուեստագիտի դերասանական հանձարի մասին . զի Ադամեան մոտադիր է յառաջիկայ գարնան , թատերական ընդարձակ պտոյտ մ'ընելնախ ի Բեդերսպուրկ , ապա Պեռլին , Վիեննա , Փարիզ և ի վերջոյ Լոնտոն :



3864

0012950

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0012950



---

معارف نظارت جلیله سنک رخصتیله طبع  
و نشر اولنمشدر